

899.962.1092

C-76



ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻՆ  
ՅԵՎ ՆՐԱ  
„ՎԱԳՐԵՆԱՎՈՐԸ“

«Վագրենավոր» պոեմի 750-ամյակին  
1187 — 1937

899.962  
Ծ-84

ՊԵՏՀԱՆԱԿ  
ՀՀԿ 44 ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ  
1938

19 ՄՎ 2011

899.962.1.092

Ը-76

ար

ՀՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻՆ  
ՅԵՎՆՐԱ  
„ՎԱԳՐԵՆԱՎՈՐԸ“

«ՎԱԳՐԵՆԱՎՈՐԸ» ՊՈԵՄԻ 750-ԱՌՅԱԿԻՆ

1187 - 1937

383

ԳԵՏՐԱԾ  
ՀՀԿԵՐԸ ԿԿ ԿԻՑ ՍԱԽԿԱՊԱՏՎԵԿԱԿԱՆ ԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
86ՐԵՎԱՆ  
1938

15 JUL 2013

14.902

ԳՈՂՈՎԱԾՈՒՆ ԿԱԶՄՎԱՆ Ե ԼՈՒՍՃՈՂԿՈՄԱՏԻ  
ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏԻ ԿՈՂՄԻՑ



1475  
38



ՀՈՅԱ ԱՌԵՎԱԿԱՆ

ԹՈՒՄԹԱՎԵԼԻՆ ՑԵՎ ՆՐԱ «ՎԱԳԻՏԵՆԱՎՈՐԸ»\*)

«ԶԵ, չի լոել մեծ Շորավի  
Յերգի ձեռի կարողին,  
Աւ դարավոր ցավն աւենի  
Չի խորտակել են հօգին»:

ՀԱՎՀ ԹՈՒՄԱՆՑԱՆ

1. Ավելի քան 200 տարի յե, ինչ ուսումնասիրության, ապա նաև գիտական հետաղոտության առարկա յե դարձել վրաց գրականության արեգակաշող պատմը՝ «Վագրենավոր» պոեմը։ Ավելի քան 30 հրատարակություննեւ ունեցել այդ յերկը 1712 թվից մինչև այսոր. տասնյակ բանասերներ ու գրականագետներ եւ գրադիւն պոեմի ֆարուշայի, սյուժեյի, կառուցվածքի, տիպերի, լեզվի, իդեաների և այլ պրոբլեմներով, ինչպես և պոեմի անմահ, համարյա լեզենդար դարձած հեղինակի անձնավորության պարզաբանման խնդիրներով, և չնայած դրան գիտական ուսութավելագիտությունը շատ և շատ հարցերի տակավին չի տվել վերջնական և անվերապահ լուծում։

Արձանագրելի յե անշուշտ, վոր առանձնապես խորհրդացին ոսութափելագիտությունը, և այն ել վերջին տարիներում, խոշոր հաջողությունների լե հասել և ավելի շատ բան և արել, քան արված եր անցյալ յերկու հարյուրամյակի ընթացքում՝ սկսած Վախտանգ Երկ թագավորից, վորն առաջին անգամ բանասիրական փորոշ խմբագրումով հրատարակեց «Վագրենավորը» 1712 թվականին։

Իսկապես խոշոր դժվարությունների առաջ և կանգնած ոսութավելագիտությունը՝ ինչ հարցի ել մոտենալու լինի։ Այդ դժվարություններից առաջինն այն ե, վոր Ռուսթավելու և մեր միջն ընկած ծամանակը մոռացության և հանձնել այդ հանձնարեղ բանաստեղծի կյանքին ու գործունեյությանը վերաբերող համարյա բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, վորի հետեւանքով այսոր Ռուսթավելու կենսագրությունը շարադրվում և համարյա բացառապես ժողովրդական բանավոր ավանդությունների ավալնե-

\*) Խուսթավելու պոեմը վրացերեն կոչվում է «Վեհիսիս տղասանի», վորը հայերեն թորգմանությամբ նշանակում է «Վագրենավոր» այսինքն «Վագրի մորթի ունեցող»։ այդ անունը հաճախ թարգմանում են «Ընձենավոր», շփոթելով վագր և ինձ կենդանիների անունները։

բով, վորոնք վերին աստիճանի հակասական են՝ անվերապահ գտահռություն վայելել չեն կարող: Այդ ե պատճառը, վոր, որինակ, անկարելի յեցեղել պարզել թե ինչ մարդ ե յեղել Ռուսաթափելին իր ծագումով՝ աղնվական, իշխանավոր, թե իր հանձարի ու գործի շնորհիլ պալատական իրազի կոչման արժանացած շինական:

Յերկը բոլոր հանգամանքը, վոր դժվարացնում և Ռուսթավելու և նրա ստեղծագործության հետ կապված մի շարք հարցերի լուծումը, այն եւ, վոր իշխող դասերը, և առաջին հերթին հոգեորականությունը, դարերի ընթացքում «ջանասիրաբար» լուսության են մատնել «Վագրենավորը» և նրա հեղինակին, իրեւ քրիստոնեական հավատի և միջնադարյան բարոյագիտության զեմ ծառս յեղած ընդվզում, բանալրանքի յեն յենթարկելայտ պոեմը և մի քանի անգամ այլին ու վոչնչացրել են այն, միաժամանակ տարեգրությունների միջից ջնջելով Ռուսթավելու անունը:

Միայն ժողովրդին ենք պարտական այն ամենի համար, ինչ մնացել  
ե մեզ Ռուսթավելուց և Ռուսթավելու մասին: Դարերի ընթացքում «Վագ-  
րենավորը» յեղել ե վրաց ժողովրդի<sup>\*)</sup> ամենասուրբելի գիրքը, զորպիսին  
նա պահել ե ձեռագրով, պահել ե իր սրտում, իր մտքում և զորդոց վորդի  
տվանդել իբրև ոժիտ: Բայց ժողովուրդն իր բանափոր ալվանդությամբ չեր-  
կարող ամեն ինչ պահել և միայն մասամբ ե պահպանել այն կարևոր տե-  
ղեկություններն ու նյութերը, վոր վոչնչացրել ե խավարամիտ կղերը,  
Վերջապես զործը դժվարացնող յերրորդ հանգամանքը պետք ե զորո-  
նել հենց իրեն՝ «Վագրենավորի» մեջ, վորն իր անորինակ վեհությամբ ու-  
խորութիւմը, ընդգրկած պատմական, աշխարհագրական, ազգագրական  
բազմապարփակ կողմերով, աշխարհալայացքի և աշխարհզգացողության վորոշ  
հակառակ յուններով իրական ու Փանտաստիկական մումենտների համա-  
գրուենով քիչ թյուրիմացությունների աղբյուր չի հանդիսացել բանասեր-  
ների համար:

\*) Ի գեղ վրաց ժողովրդի հետ մեկտեղ նաև «թիֆլոսեցի հայերը» միշտ սիրել են «Թուսթավեռ գրածները» ինչպես վկայում ե «Վազրենազորի» տապալին հայ թարգմանիչ «Կոռնելի» բառացամյանը) «Կոռնելի» խմբագրությանը դրած իր նամակում: Այս Սար-գուրի «թարգմանությունը» տպիցն նույն «Կոռնելի» մեջ՝ 1860, 1862 և 1863 թվ. համար-ներում:

Վրաց ժողովությն այնքան բարձր է զնահատել և պարբեսադրությունը, որը սրանուն պարունակած արժանիքն ու մարդագալարությունը. Սարու թորգմանաբար աւլիս ենք վրացական փոլիորից. Ճի բնաբոշ բանաստեղծություն, վոր վերցրել ենք Մ. Զիկովանու «Ժողովրդական վայրենավորություն» գրքից. Անտեղ այդ բանաստեղծությունը.

Յես ունեցի մէ բարեկլյթ,  
Եթեղաղարդ, սիրուն աղջիկ,  
Ամուսնացրէ, սփիտ ալի  
Շվարչնամուն հմ գեղեցիկ:

գործող անձինք իբր թե արտքի, հնդիկի, չինացու և այլ անուններով ներկայացված վրացի թագավորներ կամ իշխաններ են:

Իրապես, սակայն Ռուսթավելին այլաբանության վրա չի կառուցել իր պոեմը և գոչ ել Վրաստանն և նկատի ունեցել ստեղծագործության ընթացքում:

Կինելով վրաց պատմության փորոշ դարաշրջանի ծնունդ, հարազատ վրացական գրող մնալով հանդերձ, Ծուսթավելին գերաճել և և դուրս յեկել վրաց պատմության և կուլտուրայի սահմաններից ու մտել համաշխարհային, համամարդկային մշակույթի սահմանները՝ հաստատուն կերպով կանգնելով Հոմերոսի, Վիրագիլիոսի, Ֆիրդուսու, Գանթեյի և այլ հանճարների կողքին:

2. Մոռաթավելին որինաչափական հաջորդն ե իր վրացի նախորդների փայլուն պլեադայի (Շավթելու, Թմոգվելու և այլն), բայց նա շատ ավելի առաջ և գնացել և բարձր ե կանգնած նրանցից։ Նա ընդգրկել և վարպետությամբ համազրել ե Արևելքի և Արևմուտքի արվեստն ու փիլիսոփաությունը։ Նա սնվել ե վոչ միայն Վրաստանի կարկաչուն աղբյուրներով ու ջերմ արեով, այլև իրանի վարդերի բույրով, Արաբիայի լայն հորիզոնի ծիածանի գույներով, Հոմերոսի վճիռ շնչով, հունական դասական փիլիսոփայության և իմաստության ծառի պտուղներով։

Արևելքն ե տվել Ռուսթավիլուն նաև նրա պոեմի Փարուղային մասը, ինչպես ինքը բանաստեղծն ե հիշատակում իր պոեմի նախերգանքում, և Արաբիայում, Հնդկաստանում ու Ասորիքում ե ծավալվում «Վագրենավորը» շողբողուն եպոպեալի գործողութիւնը՝ հասնելով մի կողմից մինչև Հարավային ու Հյուսիսային Զինաստան, մյուս կողմից՝ Վենետիկ ու Զիրբալտար, ինչպես մեկնում ե «Վագրենավորի» Գուլանջարո և Քաջեթի տեղանուները Ա. Սվանիձեն \*):

Շոթա Ռուսթավելին ծնունդ ե վրաց պատմության այսպես կոչված վոսկեղարի, վորը կապված ե Թամար թագուհու անվան հետ և բռնում է 12-րդ դարի վերջն ու 13-րդ դարի սկիզբը:

Դա մի ժամանակաշրջան եր, յերբ բյուզանդական կայսրության կախումից ազատագրված և նրա փլատակների վրա տնտեսական և քաղաքական կենտրոնաձևից ուժի մղումով միավորված վրացական ցեղերը ստեղծեցին մի ուժեղ պետություն և չտեսնված չափերով ընդարձակեցին Վրաստանի ստհմանները զեպի հարավ և դեպի արևելք: Այդ միավորումը և արատքին խանգարիչ ուժի ժամանակավոր բացակայումը կուլտուրական մեծ տուաջընթացի հնարավորություն ստեղծեցին վրաց ժողովրդի տաղանդավոր զավակների համար, վորոնցից առաջնագույնը «Մեսխ վոնի Ռուսթավելին» եր, վորն իր «Վագրենավորը» պոեմով բարձրացավ համաշխարհային պոեզիայի գաղաթը:

<sup>\*)</sup> „Новый мир“, 1936 г., № 9, стр. 255.

սագայթները, այդ յերկու սերերը փոխադարձաբար պայմանավորել իրաւով և իր «արեի պես չքնաղ ու վաս սիրահարների իղձն իրագործել հերոսական մի շարք սխրագործությունների, անհամար փորձությունների ճանապարհով»:

Տեսնենք թե ինչպիսի մոզական ուժով և կարողացել Ռուսթավելն միահյուսել յերկու տարբեր զուգերի սերեր, իբրև հենք յուր «Վագրենավորը» պոեմի:

Արարիայի Ռոստեվան թագավորի միակ գուստը և միաժամանակ գահաժանանգը—Թինաթինը և յերկրի քաջ սպարապետ Ավթանդիլն իրար սիրում են, բայց գաղտնի յեն պահում այդ սերը. Վոչ մի հանգամանք չի խանգարում, վոր նրանք բացեն իրենց սերը և բախտավորվեն. Անսպասելիութեն յերևան և գալիս վագրի մորթով քողարկված մի խորհրդագոր հերոս (վագրենավորը), վորի առատ արցունքը, անլուր վիշտը և կորցրած սիրահարին գտնելու պատճառվ սարեսար ընկած լինելը դառնում և Ավրանդիլի ու Թինաթինի սերը բացելու բանալին, իսկ վագրենավորի, այն և Տարիելի կորցրած Դարեջանին գտնելը՝ Ավթանդիլի ու Թինաթինի սերը պսակելու պայմանը:

Ավթանդիլն իր սեփական ներքին մղումով և Թինաթինի պատվերով իրենց բախտը կապում և Տարիելի սիրահարին գտնելու փորձությունների հետ և վտանգավոր ու անորոշ ուղիների ցուցը ձեռք առած վորոնում և կորած ու գերված Դարեջանին:

Անթիվ ու անհամար փորձությունների, ասպետական ամենավեհ սըխը բագործությունների այդ բոլոր գանություններին Ռուսթավելին միաժամանակ մասնակից և անում նաև մի յերրորդ անձնավորության՝ Փրիդոնին, վորը նվիրվում և Տարիելին ընկերական խորագույն կապերով և անվերապահ հավատարմությամբ:

Ավթանդիլին ու Տարիելին վերջապես հաջողվում և Փրիդոնի ողնությամբ ազատել Դարեջանին Քաջեթի ամրոցից, և Տարիելի ու Դարեջանի բախտավորությունն Ավթանդիլի ու Թինաթինի յերջանկության դուռն և բացում:

Այսպիսով յերեք տարբեր ժողովուրդների ներկայացուցիչների՝ Ավթանդիլի, Տարիելի ու Փրիդոնի նվիրված, անկաշառ և հավատարիմ դաշինքը նվաճում և գերված արել, կյանք տալիս նրան և աշխարհը շերմացնում նրա պայծառ ու սնիչ շողերով:

Պոեմի վերջին գլուխները փայլուն, կենսախինդ, առողջ ու ներդաշնակ կյանքի հաղթանակի մի կատարյալ ապոթեոզ են հանգիսանում, շողափթիթ և հարածութ կյանքի մի ջերմ բարախ, վորպիսի կատարելության Ռուսթավելին իր հերոսներին հասցնում և հակառակ ճակատագրի, նախախամության, յեկեղեցական նախապաշտարմունքների, նեղ, սխուաստիկ այն աշխարհայացքի, վորպիսին իշխում եր միջնադարում.

Ռուսթավելին այսպիսով բարձր և կտնադար միջնադարից, նա խորակում և միջնադարի բարուագիտությունն ու գեղագիտությունը, նաշ-

Արեաշող Վրաստանի բորբաշունչ այդ հանձարը ժողովրդական ֆանտազիային և Արևելքի դիցաբանության մոտիվներից գործեց մի հրաշալի դիպակ, վորն իր կախարդական զորությամբ, իր բազմերանդ փայլով հմայում և դիպողին և նմանը չունի իր մանրամասների վիրտուոզ կերտվածքով ու ձուլածությամբ:

Իր պոեմի հենքը հուսելիու Ռուսթավելին վերցրել և յերկու գույնի նուրբ ասվյա թելեր՝ վուկեվառ և արեաշող, իրու նշան մի կողմից Ավթանդիլ-Թինաթին, մյուս կողմից Տարիել-Դարեջան զուդերի բոցաշունչ և անվերապահ սիրո:

Այդ յերկու նվիրական ու վեհ, կարծես նույնական, բայց յերանգային նուրբ տարբերություններով իրար լրացնող սերերի համար բնորոշ վուկեվառ կեվառ ու արեաշող թելերից հյուսած հենքի վրա Ռուսթավելին կաթեցրել և իր արցունքի վճիռ կաթիլները, ապա արեկի շողերն անցկացնելով իր արցունքի շիթերի միջով ու այդ ստեղծված ծիածանի յոթ գոյներով՝ ասեղնագործել և իր անձեռագործ դիպակը:

Յ. «Վագրենավորը» եպոպեան, ինչպես արդեն ասել ենք, սիրային ֆաքուլտի վրա իւ կառուցված. սերն այն հիմնական պրոբլեմն ե, վորի շուրջը հյուսել և յուր անգին դիպակը Շոթա Ռուսթավելին։ Պոեմի նախերգանքն իսկ այդ և վկայում։

Ռուսթավելին սիրո նկատմամբ ունի յուր, կարելի յե ասել, ռուսթավելական հալացքները. Ահա գրանք.

Սիրահարը պետք և լինի արեկի պես չքնաղ ու վաս,  
Առատածեռն և ունոր, ազատ դյուցազն ու զորավար,  
Կովում հաղթող, յերկարամիտ, մտքով հարուստ, լեզվով ճարտար.  
Ում լիովին չի տրված այս, չի կարող լինել սիրահար։

Սերն և դյութիչ և սքանչելի, խորախորհուրդ և և դժվար,  
Չպետք և նույն դասը դասել և ցանկասեր, և սիրահար.  
Սար ու ձոր կա յերկուսի մեջ, տարածության ովկյան անծայր.  
Լավ լսեցնք իմ այս խոսքը և մի խառնք դրանք իրար...

Սիրահարը շնացող չե, նա հաստատ է, հավատարիմ,  
Ախ և քաշում յարից բաժան և անզագար հիշում յարին.  
Թեկուղ լինի խիստ ու գաման, յարն և տերը, ինքը՝ գերին.  
Ի՞նչ և գգվանք, գրկանք, համրույր, յերը չկա սեր, սիրա մաերիմ...\*)

Իր այս հալացքները Ռուսթավելին մարմացրել և ի գեմո պոեմի յերկու զուգով սիրահարների՝ Ավթանդիլի ու Թինաթինի և Տարիելի ու Նեստան-Դարեջանի. Իր բարձր իդեաները պատկերագոր ու շոշափելի գագառներու համար Ռուսթավելին միահյուսել և յերկու զույգերի սիրո ճա-

\*) Վերցրել ենք Վահան Տերյանի թարգմանությունից։

խակարապետն և հանդիսանում ու կանխորոշում 1-2 դար հետո Յեղոպա-  
յում՝ թագավորող վերածնունդը:

Ուսութափելու «Վագրենավորից» հանվող յեղրակացությունները կա-  
րելի յե հետևյալ ձևով բնութագրել.

ա) Սիրել ծփուն ու ծիածաններանդ, լիարյուն, այսկողմյան կյանքը,  
վորի քաղցրությունը ձեռք ե բերվում պայքարով ու տքնությամբ.

բ) Արհամարել սին, «անդրգերեղմանային» կյանքը, մերժել ֆատա-  
վիդն ու խավարամտությունը.

գ) Ապրել ու պայքարել մարդկայնորեն, տոգորվել բարձր հումանիզ-  
մով, մարդասիրությամբ՝ սեփական յերջանկությունն ուրիշների յերջան-  
կության վրա հենելով.

դ) Հաստատակամորեն և անձնվիրաբար պայքարել կյանքի գեղեց-  
կությունն ու մարդկանց յերջանկությունը խախտող բոլոր ուժերի և ար-  
գելքների դեմ՝ հանուն լուսավոր ու արեաշող կյանքի, հանուն նրա լիար-  
յուն բարախի:

Այս յեղրակացությունները, վոր բղխում են «Վագրենավորից», մաքուր  
և անշահախնդիր սիրո որինակի հետ միասին կազմում են Ուսութափելու  
պատգամը և ներդաշնակ են մեր որերին, սնում են ապրելու, կյանքը սի-  
րելու, թշնամիների գեմ անխնայորեն պայքարելու, հաղթանակից-հաղ-  
թանակ գնալու այն մեծ և նվիրական զգացմունքն ու կամքը, վորով  
համակված են Ստալինյան համաստեղության յերկրների բոլոր ժողովուրդ-  
ները:

Ի դեպ ալլ իդեաների, ալլ կենսասիրության և հումանիզմի համար  
եր, վոր «Վագրենավորն» ու Ուսութափելին հալածվում եյին հոգևորականու-  
թյան կողմից դարերի ընթացքում և դարձյալ ու դարձյալ դրա համար ե,  
վոր վրաց ժողովուրդը սիրել ե և իր սրտում անմահ պահել յուր անմահ  
Շոթայի գործն ու հիշատակը:

Ոպտիմիզմի այս շեղեվրը Ուսութափելին տվել ե արտահայտչական  
չգերազանցված դրսեվորմամբ, լեզվական հնչական մի այնպիսի սիմֆոնիա-  
յով, վորի կատարելությունը զմայլանք և միաժամանակ զարմանք ե պատ-  
ճառում լուրաքանչյուրին, ով ի վիճակի յե «Վագրենավորը» բնագրով կար-  
դալու: Տաղաչափության այն ձեւը, վոր մացրեց վրաց գրականութան մեջ  
Շոթան, այսպես կոչված շարիթին, զարմանալիորեն ներդաշնակում ե բո-  
վանդակությանը, իսկ լեզվի պատկերավորությունը, հանգերի հարստու-  
թյունը, թարմ ու անմար համեմատությունները, վորոնք գունավորում  
են «Վագրենավորի» հույզերն ու մտքերը, յերկար դարեր ընդորինակման  
աղբյուր յեղան վրաց հետագա գրողների համար:

Առանձնապես հարուստ ե Ուսութափելու լեզուն ափորիզմներով, խո-  
րիմաստ, հակիրճ արտահայտություններով, վորոնք վաղուց թափանցել են  
վրաց ժողովրդի մեջ և զարդարել ու զարդարում են նրա բաժականուերը,  
նրա ստեղծագործությունը և վողջ կենցաղը: Թե գյուղում, և թե քաղա-  
քում, ամենուրեք կհանդիպեք ջահել ու ահել, գրակետ ու կիսագրագետ

վրացիների, վորոնք չափածո կամ արձակ պատմում են Տարիելի եպոպե-  
ան, հաճախ անզիր արտասանում են «Վագրենավորից» զլուխներ և ամեն  
քայլափոխում մեջ բերում Ուսութափելու մի հարմար ու դիպուկ ափորիզմ:  
Վրաց ժողովուրդը յուր հանճարի անունն ու ստեղծագործությունը  
750 տարի պահել ե իր սրտում իրեն իր ամենանվիրական սրբությունը.  
վոչ պակաս սիրով ու գորովով կպահպանեն այսուհետեւ այդ մեծահանճար  
բանաստեղծի, սիրո, ոպտիմիզմի և խոր հումանիզմի 750-ամյա ալդ յերգչի  
անունն ու նրա անմահ ստեղծագործությունը նաև այն բոլոր ժողովուրդ-  
ները, վորոնք դժբախտաբար շատ ուշ են ծանոթանում, պոեզիայի արեգ-  
նաշող գագաթին:



ՇՈԹԱ. ՌՈՒՍՔԱՎԵԼԻ  
(ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ)

1937 թվի դեկտեմբերին լրացավ յեղբայրական վրաց ժողովը ի հանձնարեղ բանաստեղծ Շոթա Ռուսթավելու «Վագրենավոր» անմահ պոեմի՝ 750-ամյակը։ Խորհրդային վրաստանի հետ միասին ԽՍՀՄ-ի յեղբայրական հանրապետությունների բոլոր ժողովուրդները նշեցին այդ փառապանծ 750-ամյակը։

կենսագրական քիչ տեղեկություններ կան Շոթա Ռուս թափելու մասին։ Շոթա Ռուս թափելու կյանքն ու գրական գործունեյությունն ուսումնասիրող գրականագետներին դեռևս չի հաջողվել վերականգնել բանաստեղծի ամբողջական ու ստուգված կենսագրությունը։ Դրավոր պատմությունը լուսավորականությունը և Ռուսթափելու մասին։ Քրիստոնյա խավարամիտ հոգեորականությունը Ռուսթափելուն հոչակելով ներետիկոս, ամեն կերպ աշխատել ե ջնջել նրա աշխատմության գրքից։ միծ բանաստեղծի հիշատակն իսպառ վերացնելու համար այդ հոգեորականությունը լերկու անգամ հանդիսավոր կերպով խարուէկի վրա այրել և «Վագրենավորը», մեկ անգամ՝ թափել Քուո գետը, Սակայն, չնայած զրան, չնորհիկ Շոթա Ռուսթափելու և նրա հանճարեղ ստեղծագործության չտեսնված ժողովրդականության, վրաց աշխատավոր ժողովուրդը սերնդից-սերունդ ավանդելով՝ խնամքով պահպանել թե «Վագրենավորը» բազմաթիվ վարիանտներով, թե կենսագրական վորոշակելություններ նրա հեղինակի մասին։ Ի մի բերելով «Վագրենավոր» պոեմում բանաստեղծի իր մասին արած հիշողությունները, ժողովրդական բանահյուսության և յուրական կուլտուրայի տվյալները, ինչպես և զուգադրելով պոեմի բովանդակած պատմական բնույթի հիշատակությունները պատմական փառաբարի հետ, կարելի յե մոտավոր ճշտությամբ ուրվագծել բանաստեղծի կենսագրությունը։

Անկասկած ե, վոր Շոթա Ռուսթավելին ծնվել ե 12-րդ դարի վերջին և իր հոչակավոր պոեմը գրել 13-րդ դարի առաջին քառորդում, այսինքն՝ պատմական մի ժամանակամիջոցում, յերբ բյուզանդական կայսրությունն, իրրե այդպիսին, ժամանակավորապես դադարել եր գոյությունն ունենալ (1204 – 1261 թ. թ.), և յերբ դեռ տեղի չեր ունեցել մոնղոլների արշավանքը, ու Զինգիալսանն իր տիրապետությունը չեր հաստատել Առաջավոր Ասիայում (1235—1238 թ. թ.):

Այս հանգամանքը, վոր գրաց գրականութեան մեջ մինչև 17-րդ դարը  
վոչ չի հիշատակություն չկա Շոթա Ռուսաթավելու մասին և «Վագրենավորի»  
պահանված ձեռագրերն ել այդ դարից առաջ չեն անցնում, շատերին ա-  
ռիթ ե տվել կարծելու, վոր Շոթա Ռուսաթավելին շատ ավելի ուշ ժամանակի  
հեղինակ ե:

Սակայն հենց «Վագրենավոր» պոեմից ել յերեսում ե, զոր Ռուսթա-  
վելին իր լերկը ձոնել ե ժամանակի նշանավոր թամար Թագուհուն, զորը  
Թագավորում ել 1184—1213 թ. թ.-ին:

Այս դարաշրջանը, իերք Շոթա Ռուսթավելին գրել ե իր պոեմը, համար-  
վում ե պատմական Վրաստանի տնտեսական, քաղաքական և կուլտուրա-  
կան կյանքի ծաղկման փոսկեղարբ։ Մինչ այդ Վրաստանը բաժանված եր-  
առանձին մասն իշխանությունների, վորոնք բոլորն ել գտնվում եին ա-  
րարական հզոր պետության գերիշխանության տակ։ 10-րդ դարից սկսած  
արարական պետությունն սկսում ե հետզհետե թուլանալ և նրա գերիշ-  
խանության յեն թակա ժողովուրդները նրանից անջատվում ու անկախու-  
թյուն են ձեռք բերում։ Դրանց թվում առաջիններից մեկն եր և վրաց  
ժողովուրդը։

Քաղաքական անկախության հոգի վրա վրաց ժողովրդի կյանքում առաջի լեռնենում անտեսական ու կուլտուրական բուռն վերելքը՝ Շոթա Ռուսթավելին, վրաց ժողովրդի հանճարեղ բանաստեղծը, հենց այդ դարաշրջանի ծնունդ եւ Անշուշտ Շոթա Ռուսթավելին այդ ժամանակի վրաց գրականության ամենաակնառու, ամենահանճարեղ բանաստեղծն եր, սակայն վոչ միակը: Այդ շրջանի լավագույն բանաստեղծներից են, որինակի, քնարերգուներ՝ Շավթելին և Զախրուխաձեն, վորոնք տպել են մինչև այժմ առեխնիկապես չգերազանցված ներբողներ:

Ծոթա Ռուսթավելին ծնվել ե, ինչպես ասացինք, 12-րդ դարի վերջերին Ռուսթավի ավանում, վորից ե, բանաստեղծն ստացել ե իր կոչումը՝ Ռուսթավելի (վոր Նշանակում և Ռուսթավեցի): Փողովրդական ավանդությունն ասում ե, վոր Նրա հայրը՝ Զախրուխան՝ Ռուսթավի տերն ե յեզեղել: Նա աչքի յեր ընկնում իր բանաստեղծական ձիրքով՝ վոտանավորներ եր գրում և ճանաչված եր վորպես «քապցախոսիկ յերգիչ» և թունոտ բանաստեղծ»:

Ըստ ժողովրդական ավանդության, Շոթա Ռուսթավելու ծննդյան որը նրա հայրը Պատերաշենի գյուղում հարսանիքի ժամանակ թունավորվում ե Քիոռդալների ձեռքով և մահանում: Այսպիսով Ռուսթավելին հոր յերեսը չի տեսնում և ծննդյան որից վորք ե մնում: Նրա դաստիարակության մասին հոգ ե տանում հորեղբայրը: Շոթան նախնական կրթությունն ստանում ե իմադոլի յեկեղեցական դպրոցում, ցուց տալով մեծ առաջադիմություն: Այնուհետև հորեղբայրը ուղարկում ե նրան մոր կողմից ազգական՝ Աթարեկի մոտ՝ Զարգմա:

Շոթա Ռուսիակելին այստեղ սովորում ե յերեք տարի։ Տևանելով Շոթայի յերևան բերած փայլուն ընդունակությունները, ազգականները նրան ու

ղարկում են իկավտոյի ակադեմիան (Կախեթիա), վորտեղ սովորում ե և չըրս տարի:

Ակադեմիայում պատանի Շոթան հոչակգում ե իբրև կազմակերպված բանաստեղծ: Նրա տաղանքը բոլորին հիացմունք ու զարմանք ե պատճառում: Տաղանդավոր բանաստեղծի համբավը հասնում ե Թամար թագուհուն:

Թամարը նրան ուղարկում ե Հունաստան իր կրթությունը շարունակելու: Թագուհին սովորաբար ամեն տարի Վրաստանից 30 լեռիտասարդ եր ուղարկում Հունաստան՝ փիլիսոփայական կրթություն ստանալու: Շոթա Ռութավելին, Հունաստանում վեց տարի մնալուց հետո՝ 23—24 տարեկան հասակում վերադառնում ե հայրենիք և շարունակում ե զրադկել զրական գործունեյությամբ, Բացի այդ, Շոթա Ռութավելին, Մեսինեթի առաջավոր յերիտասարդության իր չուրջը հավաքելով, դպրոցներ ե բաց անում և ժողովրդին կոչում դեպի գիտություն և լուսավորություն:

Ըստ ժողովրդական նույն ավանդության, Թամար թագուհին Շոթա Ռութավելուն հրավիրում ե իր մոտ, պալատը, և նշանակում ե նրան մի աხսակ պետական գանձապահ, թե՞ քարտուղար: Ժողովրդական մի այլ աշխանդությամբ Շոթա Ռութավելին մնում ե պալատում, վորպես Թամար թագուհու պալատական յերգիչ: Այդ ժամանակ Շոթա Ռութավելու մեծ յեղորը՝ Ավթանդիին գժբախտություն և պատահում: Ավթանդիլը սիրում եր Թամար թագուհուն, բայց վերջինս մերժում ե նրան և ամուսնանում ուղաց արքայորդու Գեորգիի հետ, Կարոտից ու հուսահատությունից մղված, Ավթանդիլը լքում ե իր հայրենիքն ու փախչում ոտար յերկրներ և ճամբին մահանում ե: Յեղբոր վաղբերգական վախճանը Շոթա Ռութավելուն առիթ ե տալիս «Վագրենավորը» պոեմը զրելու: Նա իր յերկը ձոնում ե Թամար թագուհուն: Պոեմի հանդիսավոր ընթերցում ե տեղի ունենում պալատում: Հանձարեղ ստեղծագործությունը բոլորին հիացմունք ե պատճառում: Թամար թագուհին առատաձենությամբ վարձատրում ե Ռութավելուն: Հերթական հաղթանակով սքանչացած՝ բանաստեղծը յերջանիկ է զգում իրեն:

Այդ միջոցին Թամարը Վրաստանի սահմաններից հեռացնում ե իր ամուսնուն և, քանի վոր վաղուց սեր եր տածում դեպի Շոթա Ռութավելին՝ առաջարկում ե նրան բաժանվել իր կնոջից և ամուսնանալ իր հետ:

Շոթա Ռութավելին մերժում ե թագուհու առաջարկը: Բանաստեղծի մերժումից վիրավորված, Թամարն ստիպում ե Ռութավելուն տեղափոխվել Հունաստան:


Վրաց աշխատավոր ժողովուրդն իր սիրելի բանաստեղծի կյանքի յուրաքանչյուր նշանակալի մոմենտի մասին բազմաթիվ վարիանտներ ե պատճում: Այստեղ բերվածը Շոթա Ռութավելու կենսագրության ամսնաժողովրդական վարիանտներից մեկն ե, վորը միաժամանակ ամենից մոտ ե ճշմարտության:

Շոթա Ռութավելու հունական կրթություն ստանալու վերաբերքալ ավանդությունը հիմքից զուրկ չե:

Ռութավելին իր պոեմում խորը ծանօթություն ե հանդես ըերում անտիկ փիլիսոփայության և գրականության: Նա միաժամանակ լավ ծանոթ եր հունական և արաբական գրականության: Ընդհանրապես Շոթա Ռութավելին կանգնած եր իր գարաշրջանի կուլտուրայի բարձունքների վրա և իր ժամանակի ամենազարգացած մարդկանցից մեկն եր: Իրան-արաբական և հույն-բյուզանդական կուլտուրաները հանձինս Շոթա Ռութավելին գտան իրենց վայրուն արահանյատիչը: Շոթա Ռութավելինը «Վագրենավորը» Արևելքի և Արևելուտքի կուլտուրաների վոխազգեցության արդյունք ե, այդ կուլտուրաների յուրատեսակ համազրությունը:

Համաշխարհային գրականության տիտաններից Շոթա Ռութավելինը վրա աղղեցություն են ունեցել մի կողմից Հոմերոսը, մյուս կողմից Ֆիրդուսին, Նիզամին և ուրիշները: «Իլիական»-ն ու «Վոդիսական»-ը, «ՇահՆամե»-ն, «Լեյլի և Մեջնուն»-ը և այլն Ռութավելինը քաջածանոթ ու սիրված յերկերն են յեղել:

Զափազանց ընդարձակ եր Շոթա Ռութավելինը հորիզոնը: Նա պարզ պատկերացնում եր այն աշխարհը, վորը հայտնի յեր գարաշրջանի կուլտուրական մարդկությանը: Պոեմում հիշատակված յերկըները՝ Զինաստան, Հնդկաստան, Արարիա, Յեգիպտոս, Հռոմ և այլն, ինչ վոր հեքյանին, մշուշապատ զաղափարներ չեյին նրա համար. Նա գիտեր այդ յերկըները, ծանոթ եր նրանց ժողովուրդների կյանքին, նյութական ու մտավոր կուլտուրային, նրանց պատմությանը: Հատկապես Արևելքին իր ծանոթությամբ՝ ավելի քան յերկու դարով նա առաջ ե անցել յեկըուպական աշխարհագրագետներից: Շոթա Ռութավելին լինելով 12-րդ դարի հեղինակ, ապերելով ու ստեղծագործելով ֆեոդալական հասարակակարգում, այնուամենայնիվ, իր մեծ հանճարի ու խոշոր երուպիցիայի շնորհիվ կարողացել ե ջարդել քրիստոնեական գաղափարախոսության և միջնադարյան մտածողության շղթաները, միաժամանակ նա կարողացել ե փշել ազգային սահմանափակության շրջանակները և կանգնել համամարդկային պրոբլեմների բարձրությանը, մնալով միաժամանակ իր ժողովրդի ամենից հարազատ, ամենից սիրված յերգիչը:



## ՇՈԹԱ. ՌՈՒՍԹԱՎԵԼՈՒ «ՎԱԳԻՐԵՆԱՎՈՐԸ»

(ՊՈԵՄԻ ՀԱՄԱԴՐԱՄ ԲՈՎԱՆԴԱԿՈՒՅՑՈՒՆԸ)

1

«Ով սիրածին չի վորոնում,  
Նա ինքն իրեն թշնամին եւ:

Արաբիայում ապօռում եր Ռոստեվան թագավորը: Նա տղաներ չուներ և վորոշեց գահ բարձրացնել իր աղջկանը՝ Թինաթինին: Այս նպատակով նա կանչեց իր վեզիրներին և խորհուրդ հարցրեց նրանցից: Թագավորացնումին խելացի և կրթված աղջիկ եր: Նա վճռական քնավորություն ուներ: Վոչնչով լետ չեր մնում տղամարդկանցից: Վեզիրները պատասխանեցին.

«Կորյունն առյուծ ե ի ծնե,  
Միւնույն են եղ և արու։»

Թինաթինը թագուհի դարձավ: Նա շքեղ խնջույք կազմեց, վողջ ժողովուրդը հրավիրեց և բոլորին հարուստ նվերներ բաժանեց:

Մեկ անգամ Ռոստեվանը վորսի գնաց իր մերձավորների հետ: Արանց թվում եր գտնվում նաև յերիտասարդ զորավար Ավթանդիլը, վորը քաջ և համարձակ մի ասպետ եր: Ավթանդիլը սիրում եր Թինաթինին և հանուն նրա՝ վորսի ժամանակ բոլորից աշքի ընկապ իր ճարպկությամբ և ուժով:

Յերբ վորուը վերջացրին, նրանք մի տարորինակ դյուցազնի հանդիպեցին, վորը նստած գետակի ափին բարձրաձայն հեկեկում եր: Նա իր զրահների վրայից հագել եր վազրի մորթի: Նրա մոտ հարուստ սարքով կանգնած եր սևաթույր նժույգը:

Թագավորը դյուցազնի մոտ ուղարկեց իր ծառաներին: Դյուցազնը սկզբում բոլորովին ուշաղրություն չդարձրեց ծառաների վրա, իսկ հետո չափազանց զայրացավ և մտրակով խարազանց բոլորին:

Ռոստեվանը և Ավթանդիլն ոգնության հասան, սակայն դյուցազնը արագությամբ նստեց իր ձին և անհետացավ:

Այս խորհրդավոր զեպքի մտսին լսելով՝ Թինաթինը նա հրամայեց Ավթանդիլին գնալ ու փնտրել վշտու անձանոթին:

Ավթանդիլը լերկար ժամանակ ճանապարհորդում եր, հարցնում յուրաքանչյուր հանդիպողի, բայց վոչ վոք վոչինչ չգիտեր վազրենավոր դյուցազնի մասին:

Մեկ անգամ նա մի խումբ ձիավորների հանդիպեց: Նրանք մահացու կերպով վիրավոր մի պատանու եյին տանում: Այդ պատանուն վիրավորներ մի անհայտ դյուցազն՝ սեաթույր նժույգի վրա:

Ավթանդիլին ցուց տվին հեռվում մի սե կետ, Նա արշավեց ալդ ուղղությամբ և տեսավ, վոր դա-վազրենավոր դյուցազն ե:

Վորպեսզի վերջապես իմանա, թե վարտեղ և թագնվում դյուցազնը՝ Ավթանդիլը ծածուկ հետապնդեց նրան, Յերկու որ անց նրանք մի մենավոր այլ հասան: Ավթանդիլը պահեց իր ձին, ծառը բարձրացավ և սկսեց գիտել: Այրից մի կին դուրս յեկավ: Նա գրկեց դյուցազնին և նրանք միասին հեկեկացին:

Առավտյան, յերբ դյուցազնը ելի ինչ վոր տեղ գնաց, Ավթանդիլը գուրս յեկավ իր թագուտոցից: Նա կողջը հարկադրեց լսելու իրեն և կինը համոզվեց, վոր Ավթանդիլն իսկապես ուզում և ոգնել իրենց: Կինը նրան թագցրեց այրի մեջ: Յերբ դյուցազնը վերադարձավ, նա վարպետորեն նախապատրաստեց նրան՝ նոր ընկերոջ հետ հանդիպելու:

Նրանք հանդիպեցին հարազատ յեղբարների նման: Հենց նույն յերեկո նրանք յերեքով նստել ելին խարուկի շուրջը և Ավթանդիլը լսեց վազրենավոր պատանու զրույցը, վորին Տարիել եյին անվանում:

2.

«Վիշտն ե, վոր մարդ պիտի տանի,  
Խիսդը ինքնին հեշտ և արդեն»,

«Մարդը պետք ե միշտ աննկուն  
Ու քաջ լինի վշտի առաջ»:

Հնդկաստանում թագավորում եր Փարսազան թագավորը, Նա հարազատ վորդիներ չուներ, այդ պատճառով ել զաստիարակում եր և իրեն ժառանգելու պատրաստում իր վորդեգրած տղային՝ Տարիելին: Յերբ Տարիելը հինգ տարեկան դարձավ, թագուհին ծնեց մի աղջիկ, վորին նեստան՝ Դարեջան անվանեցին:

Աղջիկը շատ գեղեցիկ եր: Յերբ մեծացավ, նրան փակեցին մի աշտարակում, վորտեղ նա մեծանում եր, սակայն վոչ վոք չեր տեսնում նրան: Այսպիս շատ տարիներ անցան:

Մեկ անգամ թագավորը հրամայեց Տարիելին՝ վորսի տանելու նեստան՝ Դարեջանին: Յերբ Տարիելը տեսավ նեստան՝ Դարեջանին՝ ուշաթափվեց, այնքան վեզիցիկ եր թագավորազնուհին: Այդ բողեյից նա սիրեց նրան իր վողջ կյանքում, և վորովհետեւ չեր տեսնում նրան՝ թափառում եր: Թագավորազնուհին ել սիրեց վեզիցիկ պատանուն, բայց չավանեց նրա թուլությունը: Նա իր նաժիշտի միջոցով հայտնեց Տարիելին, վոր արցունքների և ուշագնացության փոխարեն նա պետք է ցուցաբերի քաջություն և հերոսություն:

Ծովա Ռուսթավելի-2



Տարիելը զորք հավաքեց և փառավոր հաղթանակ տարավ Հնդկաստանի թշնամիների՝ խաթայեցիների զեմ։ Այս առթիվ խնջույք հրավիրեցին և այս խնջույքին գեղեցկունի Նեստան-Դարեջանը հանդիպեց հերոս Տարիելն, վորի ձեռքը վիրավորված եր։

Նեստան-Դարեջանն ու Տարիելն ավելի ու ավելի ելին սիրում իրար և մտածում ելին, վոր աշխարհում վոչ վոք նրանց չի կարող բաժանել Բայց այդպես չելին մտածում Նեստանի ծնողները...

3

Մեկ որ ել թագավորն ու թագուհին Տարիելին կանչեցին խորհրդակցելու՝ Նեստանին ամուսնացնելու մասին։ Փարսադանը Դարեջանին հարմար գույք եր համարում խորեզմական թագավորազնին։ Տարիելը տվեց իր համաձայնությունը... Իսկույն սուրհանդակներ ուղարկեցին Խորեզմ և փեսացույին Հնդկաստան հրավիրեցին։

Այս վորոշման և Տարիելի համաձայնության մասին լսեց Նեստանը և հանդիմանեց Տարիելին։ Տարիելը բացատրում ե, վոր անմտություն կլիներ հակառակվել թագավորի կամքին և մատնել իրեն։ Նեստանը խորհուրդ ե տալիս Տարիելին, վորպեսզի սա սպանի փեսացույին, վորը գալու յե Հնդկաստան, և իբրև Փարսադանի ժառանգ տիրանա գահին ու ամուսնանա իր հետ։

Խորեզմի թագավորազնին իր մերձավորներով գալիս ե և պալատի շուրջը տեղավորում ե վրաններում։

Տարիելը գիշերն սպանում ե փեսացույին և փակվում ե իր ամրոցում, ամեն կողմից իր մոտ կանչելով իր անհամար զորքերին։

Լսելով, վոր աղջիկը մասնակցել ե այս սպանությանը, Փարսադանը յերդվում ե սոլանել նրան, ով զատիշարակել ե Նեստանին։ Իսկ նրա դաստիարակչունին Դավարն եր, Փարսադանի քույրը, վոր ալրիացել եր քաջերից յերկում (գերբնակոն հատկությունների տեր, հեքիաթային եյակներ)։ Դավարը նախ ծեծեց Նեստանին և հանձնելով իր ծառաներից՝ քաջերից յերկուսին՝ պատվիրեց նրան տանել մինչև «ձովի պորտը», վրատեղ նա մեռնի ծառավից (ձովի ջուրն աղի լի)։

Քաջերը Նեստանին տանում են ծովի խորքը։ Այս բանը տեսնում և Նեստանի ընկերունին՝ Ասմաթը և հայտնում ե Տարիելին։

Տարիելը վերցնում ե իր սազմիներին ու ծառաներին, նաև Նեստանի նաժիշտին՝ Ասմաթին ու նամակ ճանապարհ ընկնում... Ամբողջ տարին Նեստանին փնտրելուց և իր սազմիներին կորցնելուց հետո (բացի յերկուսից և Ասմաթից) նա ափ և զուրս գալիս ինչ վոր քաղաքի մոտ։ Այստեղ նա հանդիպում ե գեղեցկաղեմ դյուցազն Փրիդոնին, վոր այդ ծովափնյա յերկրի թագավորն եր Փրիդոնը հրավիրում ե Տարիելին և վորսորդության ժամանակ պատմում ե, վոր մեկ անգամ, այդ նույն բլրի վրալից հետեւալ տարորինակ յերեռութիւն ե տեսել։

Ծովի վրա անհամանական արագութիւնմբ սուրում եր մի մակույկ, վորը շուտով ափի մոտ կանգ առավ։ Մակույկից յերկու սկամորթ

ստրուկներ դուրս յեկան և ափ հանեցին մի կնոջ, վորի դեմքի փայլը լուսավորեց վողջ շրջակալքը։ Փրիդոնն իր կալծակնասլաց նժույզով հետապնդեց նրանց, բայց նրանք նորից ծովի խորքը գնացին։ Տարիելն այս լսելով դառն արցունք թափեց և պատմեց Փրիդոնին իր վիշտը, համոզված լինելով, վոր Փրիդոնի տեսած գեղեցկունին՝ ինքը՝ Դարեջանն ե, Փրիդոնը հանգստացրեց նրան և ուղարկեց իր մարդկանց՝ վիճակնելու Նեստանին։ Սական այդ մարդիկ գատարէ վերադարձան։ Տարիելը հրաժեշտ ե տալիս Փրիդոնին, ընդունում նրա նվերը՝ նշանավոր սկ ձին, և սկսում ե թագանել ամեն կողմ, փնտրելով իր սրտի սիրածին։ Բայց զուր... Նա հուսահատության ե հասնում, խուսափում ե մարդկանցից և անապատների խորքում մի այր գտնելով, վոշնչացնում ե հսկա բնակիչներին՝ զեերին, ու վողջ մնացած Ասմաթի հետ ապրում ե այդ այշում։ Տարիելը չի մուանում իր սիրածին՝ Նեստան-Դարեջանին, նրա անմոռաց պատկերը վագրի նմանեցնելով՝ ինքը վագրի մորթի յե կըում շարունակ։

Այսպես վերջացրեց Տարիելն իր պատմությունը։

4

Ավթանդիլը նույնպես պատմեց, թե ով ե ինքը և ինչ նպատակով են նրան ուղարկել։ Նա խոսք տվեց Տարիելին շուտով վերադառնալու և շտապեց Արաբիա։

Ռոստեվանը, Թինաթինը, վողջ ժողովուրդն ու զորքը շատ ուրախացան նրա վերադարձին։ Նա պատմեց իր տեսած դյուցազնի զարմանալի անցուղարձի մասին։ Նա հայտնեց Թինաթինին, վոր շտապում և ոկնելու իր գժբախտ ընկերոջը՝ Տարիելին։ Ռոստեվանը զեմ եր նրա գնալուն, սակայն Ավթանդիլը ծածուկ հեռացավ, Ռոստեվանին թողնելով իր հայտնի կտակը։

«Տնոր իմ գանձը աղքատներին,  
Իմ ճորտերին՝ աղատություն»։

Վերադառնալով Տարիելի մոտ, Ավթանդիլը չգտավ նրան այրի մեջ։ Նա փնտրեց նրան ու գտավ ուշաթափ վիճակում—մի կողմում սպանված առյօն եր փոփած, մյուս կողմում՝ վազր։ Ուշքի գալով, Տարիելը պատմեց իր կովի մասին՝ վազրի ու առյօնի հետ և—թե ինչու սպանեց նրանց։ Ավթանդիլը հանգստուցում ե Տարիելին, բերում ե նրան այրը և հրաժեշտ տալով նորից ե գնում։ Նեստան-Դարեջանին փնտրելու։

Փրիդոնի հետ նորից տեսնվելով և խորհրդակցելով՝ նա կրկին շրջում ե ծովափին, վորտեղ Փրիդոնը տեսել ե Նեստանին։ Շատերին ե հանդիպում ու հարցնում։ Ճանապարհին ծովափեններից աղատում ե մի կարավան, միանում նրան և դառնալով կարավանապետ՝ կարավանը տանում ե Ծովային թագավորության մայրաքաղաքը։ Ավթանդիլն իջնում ե մի հարուստ գաճառականի տուն։ Վաճառականի կիսը, Ֆաթման-խանումը սիրում ե Ավթանդիլին և պատմում ե, վոր մի քանի տարի առաջ նրանց

ծովամերձ այգուն մոտեցավ մի մակույկ, վորի միջից դռւրս յեկան յերկու սեամորթ ստրուկ և մի արևադեմ կին: Ինքն ուղարկել է իր ստրուկներին, վորոնց հաջողվել ե բերել իր մոտ այդ գեղեցկունուն: Այդ յերկը թագավորը, լսելով գեղեցկունում մասին, տանում ե նրան իր մոտ, բայց աղջիկը կաշառում ե պահակներին ֆաթմանից ստացած թանգարժեք զարդերով ու փախչում: Այդ աղջիկն այժմ գերի լե «քաջքերի» մոտ: Նրան պահում են բերդում իրրե ապագա հարսնացու իրենց անշափահաս թագաժողանդի:

Ավթանդիլը պատմում ե Ֆաթմանին իր ով լինելը: Ֆաթմանն իր կախարդ ստրուկի միջոցով, վոր կարողանում եր թռչել և անտեսանելի մաս: Նամակ ե ուղարկում Նեստանին: Նեստանը պատասխանում ե Ֆաթմանին և մի սրտառուշ թուղթ ե գրում Տարիելի անունով՝ խնդրելով նրան մոռանալ իրեն և վերադառնալ Հնդկաստան, վորը դանվում ե թշվառ վիճակում: Իր մասին իրրե ապացուց նամակի մեջ գնում ե մի կտոր այն շատից, զորը նվիրել եր նրան Տարիելը:

Ավթանդիլն շտապում ե Տարիելի մոտ, ճանապարհին հանդիպելով Փրիդոնին և պատսելով նրան վերջին գեղքի մասին:

## 5

Ավթանդիլը Տարիելին հանդիպում ե գաշտում, սպանված առյօնծի կողքին: Յերբ Տարիելը բաց ե անում նամակը և տեսնում իրեն ծանոթ շալի կառը, ուշաթափած վաւր ե ընկնում: Ավթանդիլը, ջուր չգտնելով, առյօնի արյունով ուշգի յե բերում նրան: Նրանք վերցնում են Ասմաթին և շտապում Փրիդոնի մոտ, վորը զիտե Քաջերի (քաջքերի յերկը) ճանապարհը: Յերեք հերոսները վերցնում են Փրիդոնի յերեք հարյուր լավագույն մարտիկներ ու ճանապարհ ընկնում: Կորիքը դժվարին եր, սակայն բերդն ընկնում ե, կայազորը վոշնչացգում և Նեստան-Դարեջանն ազատվում ե գերությունից:

Ուրախ ու բախտավոր նրանք վերադառնում են Փրիդոնի թագավորությունը և Տարիելի ու Նեստանի հարսանիքն են կատարում:

Ավթանդիլն շտապում ե ազատելու Հնդկաստանը, բայց Տարիելը նկատում ե նրա վիշտը և պնդում, վոր նախ Արարիա գնան՝ Թինաթինի և Ավթանդիլի սահմար միացնելու:

Արարիայում նույնպես մեծ ցնծություն ե... Պոեմի յերեք հերոսների չքնաղ գեղեցկությունը հրացնում ե ու լուսով շլացնում հանդիսատեսներին:

Յերեքով, Նեստանի և Ասմաթի հետ գնում են հեռավոր Հնդկաստան: Ավթանդիլն առաջնորդում ե արարական ութուննաղարանոց բանակը:

Հնդկաստանին մոտենալով, նրանք յեզիպատացի վաճառականներից տեղեկանում են, վոր Փարսագան թագավորը, յերկար տարիներ փնտրելով Նեստան-Դարեջանին և Տարիելին, վերչերս մեռել ե վշտից: Նեստանն ու Տարիելը հեկեկում են: Վաճառականները պատմում են նաև, վոր խաթաշական թագավորը՝ Ռամազը, Փարսագանի մահվանից ոգտվելով, գրավել ե վողչ Հնդկաստանը, բայց մայրաքաղաքից, վորտեղ փակցել են թագու-

չին և նրա մերձավորները: Հերոսները հաղթում են խաթայեցիներին, գերի վերցնելով Ռամազ թագավորին:

Անդավաճան սիրով կապված յերեք ընկերները վորոշ ժամանակ մնում են իրար հետ, ցնծությամբ անցկացնելով իրենց ժամանակը: Ազատագրված Հնդկաստանը հանում ե իր սուզը և տոնում Նեստան-Դարեջանի ու Տարիելի վերադարձը, նրանց տալռվ Փարսադանի գահը:

Ավթանդիլն ու Փրիդոնը վերագառնում են իրենց լերկիրը: Ավթանդիլը թագավորում ե Արարիայում յերկար տարիներ՝ խաղաղ ու յերջանիկ իր սիրածի Թինաթինի հետ:

Ավթանդիլի, Փրիդոնի և Տարիելի անդավաճան ընկերությունը մինչև վերջին որերը — իսկական, անշահասեր, անձնուրաց ընկերության որինակ ե:

Այդ անխարդախ ու չքնաղ բարեկամությունն ե յերգել Շոթան՝ Ռուսթավ գյուղից, իր հիասքանչ պոեմում վորը կոչվում և «վեփիսիս աղասոսանի» («Վագրի մորթով մարդը» կամ «Վագրենավորը»):

Պոեմը վերջանում ե հետևյալ տողերով:

Ամիրանին Խոնելին ե իր տաղերով գովերգել,  
Արգուլ-Մեսիայի մասին Շավթելին ե տաղ հյուսել,  
Դիլարգեթին՝ մեծ Թմոգվելին վեհ տողերով անընդել  
Տարիելին՝ Ռուսթավելիս, և արցունքս չի հատել:



ՀԱՏՎԱԾՆԵՐ ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼՈՒ ՊՈԵՄԻՑ

1

ԸՆՁԵՆԱՎՈՐԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Մեկ անձանանչ ոմքին<sup>1</sup> տեսան  
Զըրի ափին նստած լալիս.  
Են աժդահեն թիք եր նընգած  
Ինչպես առուծ դնջանալիս:

Բոնած ուներ լոխտով<sup>2</sup> սև ձի  
Նախուն լոխտով ոսկեկարած,  
Թամքն ու լըկամ<sup>3</sup>, դոշլուղ<sup>4</sup>, լոխտեն.  
Մարզրիտներով եյին շարած:

Լալիս եր նա հեկեկալով,  
Ծով են բըխում աչքեր նըրա,  
Արտըսունքը թոշ<sup>5</sup> եր դորի  
Նուր բացելած վարդու վըրաւ:

Հագուստու վրա, վերեանցեն,  
Ուներ զըցած ընձու մորթին,  
Են մորթեմեն գդակ եր ծածկի  
Են արմաղան<sup>6</sup> աղամորդին:

Նրա դամշին<sup>8</sup> եր կութն ոսկեմեն,  
Հաստութենով զոռբա<sup>9</sup> կըռան.  
Տեսան թե չե փափազեցան  
Զըլիս<sup>10</sup> մոտիկ տեսնել նըրան:

Անձանանչուն զդիրն երի<sup>11</sup>  
Թագավորի հրամանքն ենդի<sup>12</sup>,  
Անձանանչը փըղձըկալեն<sup>13</sup>  
Նուր եկողուն անգած չեղի<sup>14</sup>:

1 Վեմ, 2 ձիու սարք, 3 սանձ, 4 կրծքկալ, 5 ցող, 6 գեղեցիկ, 7 մարզը (ազամորդ), 8 մաքակ, 9 ուժեղ, մեծ, 10 կատարելագիս, 11 բերեց, 12 այնաեղ, 13 հեկեկանք, 14 չըլից:

Դլուխը կըռած<sup>15</sup>, արտըսունքավ  
Գիղնու վրա գուք եր արի,  
Դառը ւացը աչքի լուսը  
Եւ չեր թողի դիմ եր առի:

Եկավ մոտիկ նուր եկողը  
Նա կի<sup>16</sup> մնաց մնջու հալի.  
Են գիշերե<sup>17</sup> լուլերեմեն<sup>18</sup>  
Կաթկիթում եր անձրեկ լալի<sup>19</sup>,

Ինչ զըղերին ասիր, արքա,  
Նա գլուխ չեղի խոսքուն տերիգ.  
Մտիկ տալով չկշտացավ,  
Թեպետ սիրտը ահուն շերիս<sup>20</sup>:

Մե վուտ իժում<sup>21</sup> առաջ եղի  
Ու արգ արավ<sup>22</sup>, «Ով մարդ դու նազ,  
Իմ պարնեմեն<sup>23</sup> հրամանք ունիմ,  
Պիտի հիմի նրա մոտ գնաս»:

Ամա նա կա ինչպես մի խուլ,  
Շատ լացեմեն դառել ե շաշ<sup>24</sup>,  
Արտըսունքը թաց ե արի  
Նրա շուրբիրը, գեղինն ու լաշ<sup>25</sup>:

Զըրի գենը, վրաներեմեն  
Վեր ե ըլում մի խիստ ծիկա<sup>26</sup>,  
Ամա խեղճը չե ել լըսում  
Թե ենդի մարդ կա թե չկա:

Մե նազանի<sup>27</sup> ախ ե քաշում,  
Սիրտն ե տրփում կրակով վառը.  
Գըշզըչում ե ինչպես զըբից  
Արտըսունքը արենխառը,

Թարգմ. ՍԱՐԳԻՍ

15 Կոր, կապրած, 16 ստկայն, 17 ու սաթե (աչքերի), 18 խողովակներից, 19 սուտիկ կարմիր հակինթ, 20 չտվեց, 21 հետո, 22 խնդրեց, զեկուցեց, 23 տերից, թագարից, 24 ապուց, 25 մաքմին, 26 դոռաց, 27 գուրեկան, զեղեցիկ:

Ում աչքերը չեն ցամաքում լալով ցավից դառն ու անձար,  
 Յեկեք, ում վոր բախտ և ընկել Տարիելի բախտը զժվար.  
 Կը նստեմ հեգ Ռուսթավելիս, կերգեմ խոցված յես չարաչար,  
 Յեգ ինչ վոր ցարդ զբույց եր պարզ, պիտի դառնա մարգարտի շար;

Թարգմ. Վ. ՏԵՐՅԱՆ

2

### «ԸՆՁԵՆԱՎՈՐԸ»

ՆԱԽԵՐԳԱՆՔ

ԶՈՒ

Նա, վոր ույժով ամենազոր հաստեց յերկնի կամարն անհուն,  
 Ենչեց վերուստ և արվից շունչ ամեն ինչի տիեզերքում,  
 Պարզեվեց մեղ հողն, ու տեր ենք անեղբության այս բազմազույն,—  
 Նա յե կարգում յերկրում արքա ի պատկեր յուր և ի հանգույն;

Տերդ միակ, վոր կերտեցիր կերպով հաստատ ամեն մարմին,  
 Տնւր զորություն, լեր ոգնական, վոր տապալեմ սատանային,  
 Տնւր խենթություն սիրահարի, հուր սեր անշեղ մինչեվ շրիմ,  
 Տուր թողություն այն աշխարհում անթիվ, անթիվ իմ մեղքերին;

Առյուծին և վայել վահան, նիղակ և սուր. ահա— արքադ,  
 Թամար— արե՛ արքալուհի, ում այտն ե՝ լալ, ում վարսն՝ ագաթ.  
 Կը հանդգնեմ արզիոք գովել քեզ իմ յերգով, արեի հատ,  
 Քեզ, ում նայողն, արդարապես, վայելում և շաքար ու կաթ;

Յերգենք Թամար արքայունուն, լալով արյուն՝ արցունք առատ,  
 Նըրան ձօնած յերգը ընտիր և ինձ թանաք՝ լըճերը սաթ,  
 Ու զըրիչ ինձ՝ դողդոջնեղեգ. յերգս վորպես սուրսայր մի խաչի,  
 Թող լըսողի սիրտը մեխվի, ձեղքի, վորպես տեգ մի պողպատ;

Պատվիրեց, վոր գովեմ իրան յերգով անուշ ու վոլորուն,  
 Իր հոնքն՝ աղեղ, թերթիչը՝ նետ, սաթ՝ վարսն ու լալն իր շուրթերում,  
 Ալտամեշարն իր գեղանի, բյուրեղներից հյուսված սիրուն,  
 Զե վոր արճիճ զնդանին ել մուրճը կարծր քար և փշում:

Արդ՝ պետք և ինձ յերգիս համար սիրտ, լեզու և արվեստ ճարտար.  
 Թող ույժ տա ինձ, նա թող ոգնի, իր ձեռքին և միտք ու հանձար.  
 Այնժամ կոզնենք Տարիելին, Հիշելու յենք յերեք պայծառ  
 Հսկա— հերոս միմյանց յեղբայր, վորպես գեղի իրար խոնարհ...



Իմ ընտարածին<sup>1</sup>, հայտնում եմ ձեզ, յերկինքն և վեհ սեփականում—  
Յետ յերկնքի հետ կըմրցեմ—իմ ընտրածով եմ պարծենում.  
Անգութ ե նա, ինչպես հովազ, բայց կյանքըս սոսկ ե նըրանում.  
Նըրան կըզգաք քողավորված այս իմ վեպի մեծ շարանում...

Թարգմ. Գ. ԱՍԱՏՈՒՐ

3

### ԳՈՒՍԱՆ<sup>1</sup>

Ինչպես վոր ձին կըփորձըվի յերկար ճամփին արագ վազքում  
Յեվ գնդաձիգն ասպարեզում հաջող զարկով, ուժով բազկում,  
Գուսաններին կը բնորոշե մեծ չափածոն իր հյուսվածքում,  
Հանգի, չափի խաղն ու թերին, թըռիչքն ու ճիգ նրանց խոսքում:

Նա չե գուսան, ով չե տիրում իր արվեստին, լեզվին իմպառ,  
Ում չափածոն հանկարծ կաղաց, պակսեց տեղին բնորոշ բառ...  
Գուսանի խոսքն, ինչպես աղբուր, պիտի հոսա ջինջ, անըսպառ—  
Նա անվրեա շարժե չոգանն<sup>2</sup> ասպարիզում դյուցազնաբար:

Ամեն մի մարդ իրեն մըցող զուսանների հետ չը կարծի.  
Նա չե գուսան, ում բերանից յերկու հատ հանկարծ թոշի,  
Բայց թե նա իր «ձիրքով» խրոխտա, իր զուլգ հանզին համառ կառչի,  
Զորուն ե նա մոտ ազելի. իր յերազած նա մարդը չի:

Գուսան ել կա, իրենք փոքրիկ, հասնել ճգնում են մեծերին,  
Բայց սիրաը չեն հերոսացնում, չեն տանում աշխարհը վերին...  
Յերգն ե նըման թուլ աղեղին անփորձ վորսորդ մանկան ձեռին—  
Խոշոր գազան չի հաջողվում... և կոտորում ե մանրերին...

Կան գուսաններ արտահայտվող հանդեսներում կամ յերդերում,  
Կատակներում, թեթեվ սիրո կամ նիշելի այլ գեպքերում.  
Նըրանք մեկ մեկ դուր են գալի, թե վոր լինեն պարզ յերկերում,  
Բայց վայ նրան, ով խըճճվեց իր խայտոլոր, մութ մտքերում...

Գուսանը թափն իր հանճարի պետք չե ցըրիվ տա կողմակի,  
Վողջ եյությամբ, անդավաճան պիտի տրվի մի եյակի.  
Նըրա համար միայն ապրի, նըրան գովի, նըշավակի,  
Լեզուն վարժի նըրա համար, նըրան միայն ներդաշնակի:



<sup>1</sup> Գ. Ասատուրի թարգմանության վարիանաներից: Խմբ.

<sup>2</sup> Զողանը թիւակի ձեռվ գործիք եր, վոր գործ ելին ածում գնդաձիկները—բնդացըման (գնդախաղի) ժամանակը.

<sup>1</sup> Ակնարկը վերաբերվում է Թամար թագուհուն:

## ՍԻՐՈՀԱՐԸ

Սիրահարը պիտի լինի արեվի պես չքնաղ ու վառ,  
Առատաձեռն և ունեվոր, ազատ գյուցաղն ու զորավար,  
Կովում՝ հաղթող, յերկարամիտ, մտքով՝ հարուստ, լեզվով՝ ճաբատաբ։  
Ում լիովին չի տրված այս— չի կարող լինել սիրահար։

Սերն և գյութիչ և սքանչելի, խորախորհուրդ և և գժվար,  
Զըպեաք և նույն դասը գընել և ցանկասեր, և սիրահար։  
Սար ու ձոր կա յերկուսի մեջ, տարածության ովկյան անծալը։  
Լավ լըսեցեք իմ այս խոսքը և մի՛ խառնեք դըրանք իրար...

Սիրահարը շընացող չե, նա հաստատ և, հավատացիմ,  
Ա՛խ և քաշում յարից բաժան և անդադար հիշում յարին։  
Թեկուզ լինի խիստ ու դաժան, յարն և տերն իր, ինքը՝ գերին։  
Ի՞նչ և գգանք, գրկանք, համբույր, յերբ չկա սեր, սիրտ մտերիմ։

Ով սիրում և այսոր մեկին, վազն ուզում և սիրել նոր յար,  
Ով չի մաշվում յարից բաժան, չասեք նըրան գուք սիրահար։  
Խակություն և, աղայություն, սերը խաղ և նըրա համար,  
Իսկը նա յե, ով զսպում և իր յերկրային ըղձերը վառ։

Ճշմարիտ սերն իր վիշտը միշտ թաղում և խոր, պահում թագուն,  
Յարից բաժան՝ հոգով իր հետ, մենությունն և քաղցր իր հոգուն,  
Յարից հեռու՝ խելակորույս մենում և նա, վառվում անքուն,  
Թիկուզ արքան թափե զայրույթ, յարի առաջ հեղ ու խոնարհ։

Թարգմ. Վ.Ա.ՉԱՆ ՏԵՐՅԱՆ

<sup>1</sup> Եկրջին յերկու տները հանգուցյալ Տերյանի կողմից վերջնահանապետ լոմբուզը  
գտն չեն։

## «Վ.Ա.ԴՐԵՆԱՎՈՐԸ»

### Հատվածներ<sup>1</sup>

ԱՎԹԱՆԴԻԼԵ ԱՅՑԻ ՅԵ ԳՆՈՒՄ ԹԻՆԱՓԻՆԻՆ

Ավթանդիլը պալատ մտավ ազատ, հպարտ, չամաչելով։  
Տեսավ նրան, վորի համար լալիս եր միշտ հառաչելով։  
Մուալ նստած եր աննըմանն ու զերթ փայլակ փայլում եր նա։  
Ու մթազնել եր լուսնկան մինչև անդամ լուսից նրա։

Մարմինն իր մերկ՝ նա թավ սամույր առանց աստառ հագած ուներ։  
Ու թույլ նետել եր ուսերին, նա թանգագին, նուրբ բիղեներ<sup>2</sup>։  
Սև թարթիչները մարգու սիրտ ելին խոցում, խանդավառում,  
Զուգել եյին վիզը ճերմակ մազերը խիտ ու գալարուն։

Նստած եր նա տիսուր դեմքով, գցած վրան բիղեն կարմիր։  
Ավթանդիլին ինդրեց նստել ձախով հանգարտ ու քաղցրալիր։  
Ծառան ծալվող աթոռ բերեց, նստեց նա հեղ պատկառանքով։  
Ու դեմ դիմաց նայում եր նա. լցված եր սիրտը հրճվանքով։

Աղջիկն ասաց. «Սիրտ չեմ անում խոսել քեզ հետ այս ըոսկեյին։  
Զգուռում եյի չասել քեզ այս, ինչ վոր ասել անզոր եյի։  
Սակայն գիտես պատճառը գու, ինչու յեմ քեզ կանչել ալստեղ,  
ինչու յեմ յես մոայլ նստել, տիսուր, տրառում ու խելահեղ։

Կտրիճն ասաց. «Կարող եմ յես ասել խոսքեր հոխորտալից,  
Զե վոր մարում ե հեղ լուսինն արեգակին հանդիպելիս։  
Յես անկարող եմ կոահել. . . գուցե առիթը յես լինեմ։  
Խնզրեմ ասեք՝ ինչն և ձեր ցավն և այն ինչով յես դարմանեմ։

Իր ասելիքն աղջիկն ասաց սիրուն, այլ վոչ տգեղ, վոճով։  
Ասաց. «Թեպիս հեռու և զուսպ հո քեզ պահել մինչև այսոր։  
Բայց չեմ կարծում, թե չեն տանջել քեզ յերբեն սիրո խոհեր։  
Յես առաջինը քեզ կասեմ հոգուս կոկիծը ծանրաբեռ։

<sup>1</sup> Այս և նետեյալ հատվածները Պ. Աստատուրի թարգմանության գարինաներից են։

<sup>2</sup> Նուրբ բանվածք։

Հիշում ես դու անցյալ տարի արքակի հետ վորսի գնալիս  
Տեսել եյինք մի կարիճի գետի ափին նստած լալիս:  
Այն որվանից նրա մասին եմ մտածում տարվածի պես。  
Յերկը յերկիր նրան փնտրել նրան գտնել հանձնում եմ քեզ:

Թեպետ և դու մինչեւ այսոր խոստովանանք չես արել ինձ.  
Բայց վոր սիրում ես ինձ գաղտնի, լսել ե իմ հոգին հեռվից.  
Գիտեմ, վոր դու քո այտերին անդուլ արցունք ես հեղեղել.  
Նետահարվել ես դու սիրուց, սիրո ցանցում գերի յեղել:

Ուրեմն դու ինձ պարտավոր ես կրկնակի ծառայելու,  
Նախ՝ քեզանից խիզախ չունենք և դու հպատակն ես իմ հլու.  
Յերկրորդ՝ սրախ ընտրածն ես դու, ստույգ ե այս, վոչ մտացածին.  
Այժմ գնա հեռու թե մոտ և վորոնիր այն կարիճին:

Յեզ այդպիսով դու սերդ բարկ, ավելի խոր կհաստատես,  
Ինձ կաղատես նեղությունից, սատանային չեթե հաղթես.  
Սրտում դու ցանսիր հուսո մանիշակներ, վարդեր փոխ.  
Դարձիր առյուծ, արեվի պես դեմք կգամ և ինձ տիրիր:

Յերեք տարի փնտրիր նրան, քեզ ժամանակ եմ յես տալիս,  
Դունես՝ դարձիր հաղթանակով, համբավ բեր ինձ ավետալի.  
Թե չը գտնես, կհավատամ, վոր նա եակ եր անմարմին.  
Յեւ յես իբրև վարդի կոկոն կը հանդիպեմ քեզ այն ժամին:

Յերգվում եմ քեզ, սիրտս, յեթե քեզնից բացի այլ մարդ ուզի—  
Թեկուզ արեվը մարմնանա, ներկայանա ինձ ամուսին—  
Մանեմ թող մութ սանդարամետ, լինեմ դրախտին վոչ արժանի՛  
Իմ սիրտը թող գանակ խրվի և սերդ թող ինձ սպանի՛:

Կտրիճն ասաց. «Ով արեգակ, վորի գիշերն ե շողափայլ,  
Միթի յես քեզ մեղանչական մի պատասխան կարող եմ տալ.  
Յես սպասում եյի մահվան, դու կյանք բերիր ինձ վոսկեղուու  
Իբրև ծառադ, պատրաստ եմ արդ յես քո սպասին: Հրամանդ տուրք:

Կրկին խոսեց. «Ով արեգակ, ասաված արեվ ե քեզ ծնել,  
Այդ պատճառով քեզ հնազանդ են յերկնային լուսատուներ:  
Շնորհըզ այդ, վոր ինձ արիր, ինձ համար թանդ ե զերազանց:  
Չի թառամի յերբեք իմ վարդը քո շողով լուսավորված:

Քանի վոր անձս յես վաղուց արգեն դրել եմ քո սպասին,  
Յես մեկնելու յեմ վաղվանից, չեմ ուշանա, կամ սպասի.  
Սիրտս կապույտ յերկնանման վարդագունեց, զարձավ լալա.  
Կյանքիս պարզեվը լավագույն, պատվերը քո յես հանձն առած:

Երար կրկին յերդում տվին ու կապեցին սիրո պայման.  
Յերկարացրին զրույցն ելի և ավելի մտերմացան:  
Ու մոռացան մինչ այդ անցած որերը գառն ու գառնագույն:  
Նրանց անբիծ շրթունքներից լույսի ցոլքեր եյին ցոլում:



ԱՎԹԱՆԴԻԼԸ ԳՆՈՒՄ Ե ՎՈՐՈՆԵԼՈՒ ՏԱՐԻԵԼԻՆ

Համակածիք են ինձ Յեղրասն ու Դիոնոսը իմաստուն՝  
Շատ խղճալի յե վարդը այն, վորին յեղյամն ե ցուրտ նստում,  
Ով կորցընում ե լախ այտի ու բարակում վորպես յեղեք.  
Ու թափառում իբրեք պանդուխու ձանձրանալով ամենուրեք:

Ավթանդիլի ձին քառատրոփ՝ տափաստանով արագ սլացավ,  
Թողեց սահմանն արարական, ոտարների սահմանն անցավ:  
Բայց անջատվելն արեգակից մաշեց իր կյանքը թանգագին,  
Տառապանքին վախճան կգար՝ հանդիպելով նըրան կրկին:

Առաջին ձյունը վտղ հասավ, ձյունահար վարդն ե թառամում...  
Ուզում ե իր սիրու խոցել, մերթ դանակի յե նա դիմում...  
Ասում ե նա. «Վշտերը խոր՝ կյանքը շինել ե իննըսուն,  
Զկա խրախճան, չանգի, նալի, բարբիտի<sup>1</sup> ձայն ել չեմ լսում...

Վարդն անջատված իր արեգից հար թառամում եր, թառամում,  
Սրտին կրկնում եր. «Դիմացիր»—դըրա համար չեր նըրվաղում.  
Նա թափառում եր անձանոթ, ոտար վայրեր և վորոնում.  
Հարցուփորձում ճամբորդներին և նըրանց հետ մտերժանում:

Արեվերես արեգի պես պտուլտ յեկավ ամբողջ ցամաք՝  
Խտար, անհայտ շատ յերկըներ, ամայացած ու մարդարնտիկ,  
Նա չըթողեց անտառ ու դաշտ՝ քարափ ու զետ առանց այցի,  
Հասավ Հըռոմ, Արեմուտքից մինչ Արեելը, Զին ու մաշին:

Փնտրում եր նա, թափում արցունք ու միացնում անափի ծովին։  
Իր թեն եր բարձ իրեն համար, գետինը՝ թախտ ու անկողին։  
Խոսում եր. «Յար, յես հեռացա, հոգիս մընաց քեզ մատ սակայն,  
Պիտի մեռնեմ յես քեզ համար, իմ իզձն ե այս նվիրական։

Երջում եր նա՝ վորոնելով ամենուրեք յերկրեց-յերկիր։  
Յերկնքի տակ վայր չըմնաց, վոր չալցեւ եր նա ուշագիր։  
Յեվ այսպիսով յերեք տարուց յերեք ամիս պակաս՝ անցավ,  
Սակայն այն քաջ անձանոթից տեղյակ մի մարդ նա չըտեսավ։

Մի որ մտավ նա մի յերկիր անմարդաբնակ, վալրի, տրտում։  
Ամբողջ ամիս նա ման յեկավ, չնանդիպեց աղամորդու։  
Այսպիսի ցավ չեր հանդիպել վոչ Ռամինին և վոչ Վիսին։  
Որ ու գիշեր նա մտորում եր միայն իր յարի մասին։

Հասավ նա բարձը մի լեռան, ոթեանեց նըրա լանջին։  
Յեվ յոթն որվա ճամփի չափ լախ մի դաշտ բացվեց իր առաջին։  
Ճածում հոսում եր գետն արագ, չեր դիմանա նրան կամուրջ։  
Ծածկված եյին գետեղերքներն անտառներով սաղարթամութ։

Լեռան գլխից նա հիանում եր՝ իր որերը հաշվելով.  
Յերկու ամիս եր մընացել—նա հառաջում եր հոգեխոռվ։  
«Ավաղ,—ասում եր, —կրացվի ձախորդությունս վողբական։  
Ել վարկը չի վիրականդնի—և չեմ ծնվի յերկրորդ անգամ»։

Յեվ նա տարվեց մտածմունքով, թե արդյոք վոր միջոցն ընտրի.  
«Թե ձեռնունայն վերադառնամ, ինչու կորա այսքան տարի։  
Ի՞նչ զեկուցեմ իմ արեվին, ինչու այսքան թափառեցի,  
Յերբ սնւան անգամ յես չիմացա նըրա մասին, ում վնտրեցի։

Իսկ յեթե յես իտ չգառնամ, ուրիշ որեր կանցնեն այսպես  
Յեվ լուր չառնեմ նրան մասին, վորին այսքան փնտրել եմ յես,  
Շերմագինին արված ժամկետն ել կհասնի. կսկսի լալ  
Գուժել վախճանըս արքային, և նա կարող ե հավատալ։

Կագդարարի իմ մահն այնտեղ, ինչպես վոր յես եմ պատվիրել,  
Յեվ կսկսեն այնտեղ սգալ ու անց կացնել վշտու որեր,  
Իսկ յես յերկար ման զալուց յետ վերադառնում եմ կնորանի։  
Այսպես վողբում եր ինքն իրեն սրտով թախծոտ և անձկալի։

Խոսում եր. «Տեր, ինձ համար եր չարիր արդար մի դատաստան։  
Ինչու ունայն անցկացրիր յերեք տարիս թափառական,  
Դու փշեցիր սրտիս բերկանքն ու վշտերով լցրիր հոգիս,  
Չեն չորանում գիշեր-ցերեկ աչքերս դառն արտասուքից։

Նա համոզում եր ինքն իրեն, վոր համբերի։ Խոսում եր նա.  
«Չեմ մեռնի, վհչ, յես որ առաջ. և չե տրտում հոգիս հիմա։

<sup>1</sup> Պարսկական յերաժշտական գործեքներ են։

Առանց տիրոջ՝ յիս անկարող եմ ինձ ոգնել. զուր եմ լալիս:  
Բախտի վճիռը չի փոխվի, չի կատարվի անկարելին:

Ամեն մի վայր յերկնքի տակ յես անցկացա ուշիմ ու լուս,  
Բայց վոչ մի տեղ չը լսեցի այն կարիճի մասին մի լուր  
Իրավ ելին նըրանք, վորոնք նրան կարծում են սատանա:  
Լացն ինչ ոգուտ պիտի բերի, զուր եմ լալիս յիս անխնա»:

Յեկ Ավթանդիլն իջավ սարից, անցավ անտառը խավարտչին:  
Յեղեգնուտից արդեն հոգնած տափաստանով սուրում եր ձին.  
Կորովն և ուժը կոների դավաճանել են սկսում.  
Կարոտ եր նա բյուրեղ դաշտի կայաններին արեվաղուն:

Նա վորոշեց վերադառնալ: Ու հառաչեց, աղա լացեց:  
Շարունակեց դաշտով սուրալ, աչքով հեռու ճամփան չափեց:  
Ամբողջ ասիս նա վոչ մի տեղ չեր տեսել մարդ մի շնչավոր:  
Լոկ գաղաններ զարնուրելի, բայց չեր լարել աղեղը գոռ:

Յեկ Ավթանդիլը վայրատես՝ թեպետ արցունք եր լոկ հորդում,  
Բայց և այնպես ուզեց ուտել—հատուկ և այդ աղամորդուն:  
Ու Խոստոմյան հուժկու թեպով իր նա գաղան նետահարեց,  
Շամբուտի մոտ իջավ ձիուց ու կայծանով կրակ վառեց:

Զին բաց թողեց արածելու, մինչեվ վոր միսը խորովվեր,  
Տեսավ՝ իր կողմն են արշավում յերեք անհայտ ձիավորներ:  
Ասաց. «Սըրանք լավ մարդիկ չեն, ավազակներ են ինձ թվում:  
Հողեղեն մարդ, վորքան գիտեմ, այս կողմ յերեք չի հայտնըվում»:

Այսպես անզեն անպետք եմ յես. կարող են ինձ կարծել վախկոտ:  
Հագավ զըրահ, զենքերն առավ, հեծավ նրդույգն իրա ցասկոտ:  
Զեռքին պատրաստ ուներ աղեղ, մեջքին կապած եր թուրն ահեղ,  
Ով նրա հետ կավել ուզեր, կուզեր նա մահն իր խելահեղ:

Ու վերցրած աղեղ ու նետ, նա դեմ գնաց առանց ահի:  
Յերկու հոգի միրուքավոր բերում ելին մի պատանի:  
Վիրավորված եր նա գլխից ու թուլացած, արյունաքամ:  
Լալիս եր նա և տառապում ու հազիվ հազ շնչում անդամ:

Կանչեց. «Ովքեր եք, յեղբալրներ, յես կարծեցի ձեղ ավազակ:  
Յեկ նա ուեց. «Հանգստացիր, յեղիր մի կերպ մեղ ոժանդակ,  
Թե չես ոգնի, մեղ ձախակցիր, վշտին նոր վիշտ բազմապատկիր,  
Վողբա մեր վողբը գառնագին, մեղ հետ սգա և արտասվիր»:

Յեկ Ավթանդիլն ալդ սգավոր մարդկանց մոտիկ հարցեր տիեց.  
Յեկ հեկեկանքն ընդհատելով պատմում ելին դառնահեծեծ:  
«Մենք յեղբալրներ ենք յերեքով. դրա համար ենք արդ սըգում:  
Ունենք ամուր բերդաքաղաք Խատակաթի շրջակայքում»:

Լոել ելինք, կան շատ վորսեր այս կողմերում. վորսի յեկանք:  
Մեզ հետ մեր զորքն եր անհամար. գետի ափին մենք մոտեցանք:  
Մեզ վորսավայրը դուր յեկալ. ամբողջ ամիս այստեղ ելինք.  
Դաշտում, սարում ու կիրճերում անթիվ գաղան կոտորեցինք:

Մենք, այս յերեք յեղբալրներով, լավ նետողներ հանդիսացանք,  
Մեզ ուղեկցող նետողներից ամեն մեկից ել գերազանց:  
Ու պարծեցանք իրար առաջ՝ նետելու մեջ և վիճեցինք,  
Սակայն իրար չհամոզած մենք իրարից դժգոհեցինք:

Մենք զորքն ալսոր հետ զարձրինք պախրաների մորթով բարձած,  
Սսում ելինք. յերեկացնենք, թե մեղնից ով և գերազանց:  
Մենք կը մնանք ինքնազլուխ, կանգնենք ամեն մեկն առանձին  
Նետենք միայն մեր տեսածին, վոչ ուրիշի նըրկատածին:

Յերեք հոգով մենք մնացինք վոտից գլուխ սպառազեն:  
Չորքին մեկնել հրամայեցինք, վոր անտեղի չկասկածեն:  
Վարսում ելինք ամբողջ դաշտում, անտառներում և ձորերում,  
Մեր վերեվում թեվող հավքերն ու գաղանները կոտորում:

Հանկարծ կտրիճ մի յերեվաց մուլ, տխուր, ամբարտավան,  
Հեծած ահեղ նժույզը սեվ, վոր հրեղին եր, աննման:  
Նա վագրենի ուներ հազած մարմնի վրա և իր գլխին:  
Նրա նման չքնաղ եյակ չե հանդիպել գեռ վոչ վորին:

Նայում ելինք՝ նրա փայլից տսես աչքներս շըլացած:  
Կարծում ելինք արեվել ե նա, վոր յերկնքից իջել և ցած:  
Մենք ուղեցինք նրան բռնել ու համարձակ դիմեցինք մոտ:  
Այդ և պատճառը, վոր թափում ենք արտասուք այսքան վշտու:

Վորպես ավագ՝ կըտսեր յեղբօրս ինդրեցի՝ նրան գերի.  
Ինձ հետեվող միջնեկը շատ գովեց նժույզը հեծվորի.  
Առաջարկեց, վոր հարձակվենք նրա վրա մենք միասին:  
Հարձակվեցինք: Գընում եր նա հանդիսա, չքնաղ ի լուսին:

Ու գալկահար վարդը հանկարծ շառագունեց բյուրեղ լալից.  
Մեր դեմ ահեղ ցասման փոխեց իր յերազները քնքշալից:

Մեզ վոչ գերեց, վոչ ազատեց, մեղ մարդատեղ ել չը դրեց:  
Միայն իր դեմ խակ գործողին իր մարակով հասունացրեց:  
  
Առաջընթաց եր մեր կրտսերն, իսկ ավագներս՝ իր յետել:  
«Կանգնիր»—ասել համարձակվեց, ձեռքով միայն հպավ թեթել:  
Իսկ նա թրին ձեռք չը տվեց—ու կանգ առանք մենք պատկառուն.  
Միայն զարկեց նա մարակով. հոսեց գլխից առատ արյուն:  
  
Յեղայրը մեր վիրավորված, իսկույն ձիուց վայր տապալվեց,  
Մենք քարացած, սարսափահար, իսկ նա բընալ շաճապարեց:  
Բան չասացինք ել մենք նրան, ով մեզ խոցեց դառնախոռվ—  
Յեթե առանց թրի հաղթեց, մաս մաս կտներ նա մեզ թրով:  
  
Իր մարակի մեկ հարվածով գլուխն այնպես նաև պատառեց,  
Վոր տրորեց վորպես փոշի, վորպես անհույս գիակ փոեց,  
Իր դեմ անմիտ խրզախողին նըլվաստացրեց հողի նման:  
Յեվ նա սուրում եր մեր առաջ մույլ, հանդուզն, ամբարտավան:  
  
Ել չը դարձավ. գընաց հանգիստ իր նժույգի հետ միասին...  
Նայիր, ահա գնում ե նա ինչպես արեվ, ինչպես լուսին»:  
Յեվ լացողները ցույց տվին նրան մի կետ հեռանշմար.  
Դեռ յերեվում եր սեվ նժույգը՝ սեզ մեջքին արելը անմար:  
  
Զյունել այտերն արտասուրով՝ Ավթանդիլին ել հարկ չկար,  
Վորովինետիվ իզուր չանցան թափառումներն իրա յերկար:  
Մարդն յերբ հասնում ե փափագին, զտնում փնտրածը բաղձակի,  
Կարիք չունի այլեւ հիշել նեղություններն իր անցյալի:  
  
Ասաց նրանց. «Իմ յեղբայրներ, պանդուխտ եմ յես աստանդական.  
Այդ կտրիճն վորոններու հայրենիքից այստեղ ընկա:  
Հիմա արդեն ձեր շնորհիվ հասա յես իմ նպատակին:  
Աստված հեռու պահե վշտից և հասցնի ձեզ՝ փափագին:  
  
Ինչպես վոր յես փափագս առա, իմ վորոնածն արդեն գըտա.  
Սյնպես և ձեր յեղբոր ցալին, հիվանդության թող վերջը գա»:  
Նրանց համար տեղ ցույց տալով ասաց. «Լզգնեց այն կողմ տարեք,  
Այն զով տեղում, այն ստվերում նրան մի քիչ հանգիստ արվեք»:  
  
Այսպես խոսեց և իր նժույգն ասպանդակեց սպառազեն,  
Սուրաց նըթույգն ու սլացավ, ինչպես թոկից փախած բաղեն  
Յեվ կամ լուսինը, վոր վազում ե լույս հետքով արեգակի:  
Հետզնետե հով եր գալիս նրա սրտի վառ կըրակին:

Հասնում եր նա և մտածում՝ ինչպես նրան նա մերձենա.  
Անզգուշ խոսք ու զրույցից խենթն ավելի կը խենթանա:  
Պիտի խելոքը միշտ վինտրե անհընարի համար հընար.  
Ու սառնասիրտ պիտի լինի, խելագարից չվախենա:  
  
Նա խելագար ե քանի վոր և գազաղած ու վայրենի,  
Վոր վոչ վոքի մոտ չի թողնում, վոր նըրան խոսք հասկացնի,  
Թե հանդիպենք յերես-յերես, իրար զարկել մենք կսկսենք.  
Կամ նա պիտի ինձ սպանի, կամ յես նրան, յեվ զուր կորչենք:  
  
Այն կտրիճին հարվածելու համար յես թուըլս չեմ քաշի.  
Վոչ կսպանվեմ, վոչ կսպանեմ, չեմ ել վասպի, կամ վասպի,  
Կէետեվեմ նրան հեռվից առանց աչքից բաց թողնելու».  
Յեվ գնացին, անցան դաշտեր, շամբեր, ձորեր, հեռու, հեռու...  
  
Քաջ Ավթանդիլն այս եր սոսում. «Վաստակս ինչու անցնի ունան».  
Չկա եակ մի այնպիսի, վոր իր համար բուն չունենա.  
Ուր ել գնա, յես կհասնեմ, ամեն պարիսպ կարհամարհեմ,  
Մինչեվ վերջին ուժերս յես նրան այսպես կհետեվեմ»:  
  
Յերկու գիշեր, յերկու յերեկ հետեւեցին այդպես իրար,  
Չառած՝ բերան հաց, կերակուր, չառած վոչ քուն և վոչ դադար.  
Գիշեր-ցերեկ միշտ հոգնատանց մի պահ անգամ չկանգնեցին.  
Յեվ արցունքներն այն յերկուսի զաշտելն ամեն վոռոգեցին:  
  
Այսպես մի որ, յերեկոյան, յերեկացին հսկա ժայռեր  
Ժայռերի տակ հոսում եր գետ ու յերեկում եյին ալրեր:  
Գետի ափին, պարզ չեր, յեղեղ, թե այլ բույսեր եյին բուսնում:  
Բարձրակատար ծառերն այստեղ ժայռի գագաթն եյին հասնում:  
  
Կտրիճն անցավ գետն ու ծառուտն, ուղեվորվեց գետի այրեր.  
Իսկ Ավթանդիլն իջավ ձիուց ու վորոնեց բարձր ծառեր:  
Զին ծառի տակ կապեց ու ծառն յելավ՝ աչքով վորոնելով.  
Տեսալ ինչպես կտրիճը այն գնում եր՝ դասն արտասվելով:  
  
Յերբ ծառաստանն անց կացավ լացող կտրիճը վագրենավոր,  
Այրի մուտքին դիմավորեց նրան մի կին սև ջուբավոր,  
Վոր սկսեց լալ բարձրածալն, ծովի նման արցունք թափեց:  
Կտրիճը վար իջավ ձիուց, կնոջ վըզովը փաթաթվեց:  
  
Կնոջ մազերը թավ, խըռիվ նա խըտացրեց իր թափուտով,  
Իրար գրկած կանգնած եյին կտրիճը ու կինն այն հոգեթով.

Առզպում եյին բարձր ձախով, թնդում եր լեռն արձագանքից:  
 Իսկ Ավթանդիլն ապշել եր այդ աղմուկներից և այդ կյանքից:  
 Կինն իր վշտին դադար տվեց, մի պահ նըանք հանդարտվեցին.  
 Կինը ձիու սարքը հանեց և ալրի ներսը տարավ ձին:  
 Ու զենք-զրահը կտրիճի հանեց նա լուռ ու սպավոր  
 Ու ներս մտան և դուրս չեկավ այրի խորքից վոչ վոք այդ որ:  
 Յեկ մտածում եր Ավթանդիլն. ինչպես հասնի այդ գաղտնիքին:  
 Յերբ լուսացավ, սեկ շորերով կինը յելավ այրից կրկին.  
 Սև ձին սանձեց և իր քողով յերկար սրեց, սարքը դրեց,  
 Ապա կրկին զենքն ու զրահը անխոս ու հեղ նա դուրս բերեց:  
 Սովորությունն եր կտրիճի՝ տանը յերկար նա չեր նստում:  
 Կինն ել լալիս, կուրծքը ծեծում, վարսերի խուրձը պոկոտում:  
 Նորից իրար վզով ընկան: Նա համբուրեց, հեծավ իր ձին,  
 Յեկ տխուր կինն ել ավելի տխրեց: Նորից բաժանվեցին:  
 Յեկ Ավթանդիլն արդեն տեսավ արեգնային դեմքը նրա.  
 Մորուք չուներ, ընչացքը վեր եր վոլորել: Արեկ եր նա:  
 Քամին բերեց հալվեցի բույր, այդ նըրա բույրն եր ինկածին:  
 Այնպես կընկճեր նա առյուծին, ինչպես հուժկու առյուծն այծին:  
 Գընաց նորից նա այն ճամփով, վորտեղ յերեկ հենց հանդիպեց:  
 Անցավ շամբուտն ու հեռացավ, ապա դաշտի կողմը դիմեց:  
 Ավթանդիլը թագուն նայում եր մի ծառի յետեվ անցած:  
 Ասում եր նա. «Զարմանալի հաջող տարավ այս գործն աստված:  
 Սրանից ել հարմար առիթ չեյի ցանկա յես տիրոջից.  
 Յես այս կնոջը կստիպեմ, վոր ինձ լուրեր տա այս քաջից.  
 Իմ սիրտն ու վիշտն ել իսկական նրա առջեվ յես կրանամ.  
 Յես վհչ նրան հարված կտամ, վհչ նրանից յես կստանամ:  
 Իջալ ծառից և արձակեց նժուլդն իր ձեռով կապած.  
 Հեծավ, այնտեղ ուղեկորվեց տեսավ այրի գոները բաց,  
 Կինը կրկին այրից յելավ հուզված սրտով, արտասվաթոր,  
 Կարծում եր, թե վերագարձավ վարդերեն իր վագրենավոր:  
 Չճանաչեց. սա իր տեսքով չեր նմանում նրա քաջին.  
 Յետ փախավ կինը ճշալով, ժայռերն ահեղ դողդողացին.  
 Սա հարձակվեց, բռնեց կնոջն ինչպես թակարդը կաքավին:  
 Լալիս եր կինը միալար, դիմում ժայռին ու անտառին:

Կինն անձնատուր չեղավ նրան. նայելն իսկ պիղծ եր համարում.  
 Ու թպրտում ինչպես կաքավը արծվի հզոր մազիլներում,  
 Ոգնության եր կանչում ինչ վոր Տարիելի, վոր չեր գալիս,  
 Ավթանդիլի առջեկ չոքած նա աղերսում եր ու լալիս:  
 Իսկ սա ասում եր. «Մի վախիր, յես մարդ եմ, յես աղամորդի.՝  
 Փունջը տեսա մանուշակի և դալկահար չքնազ վարդի.  
 Պատմիր, թե մի ե նա՝ զեմքով պայծառ արեվ, կազմով նոճի:  
 Խնդրում եմ քեզ, հանգստացիր, յես ուրիշ բան չեմ պահանջիս:  
 Յեկ կինն ասաց արտասկելով. «Քո հայցն ե սուր գատավը ճիռ.  
 Խելքի արի, յեթե դու խենթ ես, յեթե վոչ, — ինձ արձակիր:  
 Պահանջդ շատ ե գժվարին. այդ հեշտությամբ յես չեմ պատմի:  
 Դու չես տիրի այդ գաղտնիքին. դուր ժամանակիդ մի վատնիր:  
 Շարունակեց. «Յերիտասամրդ, իզուր ես դու խնդրում այդքան,  
 Այդ չի կարող գրի առնել ամենավարժ գրիչն անդամ.  
 Դու մի անգամ կասես. «պատմիր,» յես քեզ կասեմ «վոչ» անհամար:  
 Ինչպես ծիծաղն ե լացից լավ, սուզն ե լերգից լավ ինձ համար»:  
 Կտրիճն ասաց. «Թափում եմ յես արյուն արցունք, ահա նայիր.  
 Յես ուշացել եմ, նեղն ընկել. յես խղճալի յեմ, խնայիր:  
 Ինձ մի սպանիր, պանդուխտ եմ յես, խղճա, պանդուխտ ես դու  
 նույնպես:  
 Քո պատմությամբ դու կը մարես իմ սրտի բոցը դառնակեզ:  
 Կին, չդիտես, ինչ նեղություն ու ճանապարհ եմ յես անցել,  
 Ինչքան ծարավ եմ այն լուրին, վոր լսել չեմ կարողացել:  
 Յես քեզ դտա. վորքան ել դու վիրավորվես իմ խոսքերից,  
 Յես, մեկ ե, քեզ չեմ արձակի. պատմիր և մի քաշվիր ինձնից»:  
 Պատասխանեց. «Յես մի, դու՝ մեր հանդիպումն անմիտ ե, զուր.  
 Պատժվելիր պիտի, յեղամ, թե մոտ լիներ արեվս հուր:  
 Չեմ ցանկանում յերկար խոսել, յես քեզ պիտի հակիրճ ասեմ.  
 Վարվիր այնպես, ինչպես կուզես, յես քեզ վոչինչ պատմելու չեմ»:  
 Կրկին խնդրեց յերկումերով, կնոջ առաջ նա ծունկ չոքեց,  
 Սակայն նրան չհամոզեց, աղերսելուց արդեն հոգնեց:  
 Նրա գեմքին զայրույթ պայթեց, լարեց աչքերն արնակալած,  
 Ծամը բռնեց ու քաշ տվեց, բկին գրեց դանակը բաց:  
 Ասավ. «Քանի վոր ինձ այսքան վրդովեցիր, քեզ չեմ ների.  
 Յեկ միթե դու պիտի ստիպես, վոր յես թափեմ արցունք աղի.

Վոր քեզ կրկին չը չարչարեմ, լավ ե՝ պատմիր դու մի անգամ,  
թե չե, աստված տա թշնամուս այն մահը, վոր յես քեզ կտամ»:

Կինը. «Դու շատ անաջող ձեզ ես ընտրել՝ ուժ գործադրելու.  
Թե չը մորթես, յես չեմ մեռնի, ուրեմն վողջ եմ մնալու.  
Յեզ ել ի՞նչու համար պատմեմ, կյանքս մահվան վտանգ չունի.  
Յեթե մորթես, յես կմեռնեմ—պատմող զլուխն ել չի լինի»:

Կրկին ասաց. «Ինչու յեկար, ինչ ես հարցնում թե ով եմ յես.  
Քանի յես վողջ եմ, կենդանի, չեմ պատմելու այդ բանը քեզ:  
Յես ավելի լավ կսեպեմ զլուխս տալ սպանելու,  
Ի՞նչպես անպետք թղթի կտոր, շատ հեշտությամբ պատառելու:

Զկարծես թե ինձ սպանել—զա ինձ պատիժ ել լինելու.  
Դու դրանով կը չորացնես արցունքիս գետն, ել չեմ լալու.  
Մի ծղոտից ավելի ցած եմ կյանքս յես գնահատում.  
Ի՞նչպես խոսեմ քեզ հետ անկեղծ—յերբ չգիտեմ թե ով ես դու»

Սա մտածեց. «Այս կնոջ հետ չի հաջողվում այսպես խոսել.  
Պետք ե ուրիշ, գործադրելու, ավելի լավ հնար գտնել»:  
Թողեց նրան, նստեց մենակ և արտասուք թափեց առատ,  
Ասաց. «Իզուր քեզ նեղացրի, յեզ յես հիմա զղջում եմ շատ»:

Կինն եր նստած խոռվ, մոալ, նա տակավին չեր մեղմանում.  
Ավթանդիլը լալիս եր դեռ, վոչ մի խոսք չեր արտասանում.  
Արտասուքի մի ավազան վարդաստանում եր կազմվել...  
Հիմա արդեն կինը լացեց. Ավթանդիլը եր ազդվել

Արտասվում եր նա ջերմաջերմ, վորովհետեւ խղճաց նրան.  
Նստած ելին իրար ոտար ու բաց չեյին անում բերան.  
Կտրին զգաց՝ կնոջ զայրույթն արդեն իջել ե իրեն դեմ,  
Աղերսալի արտասվելով կնոջ առաջ չոքեց արդեն:

Ասաց. «Դիտեմ, յես իրավունք չունեմ վրադ վստահելու.  
Քեզ բարկացրի և այժմ կամ վորբի նման պանդուխտ ու լուս:  
Վստահու թյունդ դրավելու համար յես քեզ եմ նվիրվում.  
Յոթը ճամբին խոստովանած մեղքն ե միայն մարդուն ներվում»:

Թեպետ և քեզ յես իմ մասին շատ վատ կարծիք կազմել ավի,  
Բայց սիրողին պետք ե խղճալ—այս պետք ե շատ լավ իմացվի.  
Ամեն կողմից անզոր եմ յես, քեզնով պետք ե ուժ ստանամ.  
Ավելին ինչ կարող եմ տալ—սրտիդ համար հոգիս կտամ»:

Յերբ կինը՝ հեգ այն կտրիմից լսեց խոսքեր սիրո մասին.  
Արցունք թափեց մորմոքվելով, Ավթանդիլի հետ միասին.  
Բարձր ձախով, դառնահառաչ սկսեց լալ, չծիծաղեց:  
Ավթանդիլի սիրաը ցնծաց, աստված փափազը կատարեց:

Ու մտածեց. «Իմ խոսքերից սրա յերեսն ե զժգունում:  
Յերեվի սա մեկի համար խելակորույս լաց ե լինում»:  
Ասաց. «Իմ քույր, սիրահարին թշնամիներն ել են խղճում:  
Միրողըն ինքն ե մահ վնտրում, մահից յերբեք նա չի փախչում»:

Յես ել մի խենթ սիրահար եմ, յես հազիվնազ եմ կենդանի:  
Իմ արեգակն ինձ ուղարկեց գտնեմ նրան ուր ել լինի:  
Շատ վալր, վորին ամպ չի հասել, յեղել եմ այդ վայրի վրա:  
Յեզ ձեր սիրտը արդեն գտա—նույն ե՝ քո սիրտը թե նրա:

Նրա յերեսն իմ սրտի մեջ վորպես պատկեր յես գծեցի.  
Նրա համար խելակորույս խրախճանքներս կարծեցի.  
Յերկու խելքից դու մեկն ընտրիր—փրկիր ինձ կամ գերի գարձու.  
Կամ ապրեցրն, կամ մահացրն—իմ ցավին ցավ ավելացրն».

Կինն այս անգամ Ավթանդիլին պատասխանեց շատ հաճելի.  
«Այդ ձեզը, վոր դու ընտրեցիր, ինձ ավելի յե գուր գալիս:  
Փոքը ինչ առաջ թշնամություն սիրմանեցիր դու իմ հոգում,  
Այժմ գտար քեզ սրտակից, քո քրոջից ավելի՝ քույր»:

Յեզ քանի վոր դու գիմեցիր իբրեւ զենքի՝ սիրո խոսքին,  
Վճռում եմ յես այսորվանից պիտի դառնամ յես քո գերին.  
Քեզ նվիրում եմ իմ սիրտը յես, չվշտացնեմ, կվոգեվորեմ,  
Քեզ ծառայեմ և քեզ համար իմ կյանքն անգամ զոհաբերեմ»:

Այժմ ինչ վոր յես քեզ առեմ, յեթե լսես հոժարակամ,  
Նպատակից ել չես շեղվի. կհաջողվի քեզ այս անգամ.  
Թե չես լի, դու չես գտնի վնտրածը քո, ինչքան ել լաս,  
Դու կմեռնես կյանքից դժգոհ և անպատիվ կը հեռանաս»:



ԱՎԹԱՆԴԻԼԻ ԿՏԸՆԸ

Յեղ նա նստեց թագավորին հուզիչ նամակ մի գրելու.  
«Ո՞վ թագավոր, թողնում եմ քեզ, ինձ մի ջանար դու փընտրելու.  
Յես չեմ կարող այստեղ մնալ սրտիս կրակն ել վառելու.  
Ների՞ր դու ինձ, տնւր ուղեկից վողորմությունդ ինձ կրելու:

Զի ոգնելու քեղ սփոփանք, զուր և նույնպես արցունք թափել.  
Կկատարվի յերկնի վճիռն, հնար չկա բախտին խարել.  
Բայց սեր պապերն են կըտակել մեզ, չընկընվել, ցավը զսպել—  
Մեկ ե՛ մարդուն չի վիճակված ճակատագրիցն իր խուսափել:

Վոչ նեղ, և վոչ ժայռու ուղին մահարշավին կխանդարի.  
Դաժան մահվան են յենթակա ամեն վախկոտ և քաջարի.  
Հողն ե հետո հյուրընկալողն ամեն հղոր և անկարի,  
Անփառունակ կյանքից սակայն փառքով մեռնելն և ցանկալի:

Բախտը յեթե ինձ խորտակեց, այդ խորտակիչն ամեն կյանքի,  
Յեղ յես մեռնեմ ինչպես պանդուխտ՝ կարոտ մոր լաց — հեծեծանքի.  
Յեղ վոչ ընկեր, վոչ մըտերիմ չարժանացնե ինձ պատանքի,  
Թող չը թողնե ինձ այդ ժամին քո սիրտն առանց կարեկցանքի:

Աւնեմ ձորտեր և գանձ անթիվ—դա լավ հայտնի յե ըոլորին,  
Տնւր ձորտերիս ազատություն, գանձըս՝ աղքատ + չունեվորին,  
Յեղ լիացըն դու ամենքին՝ վորրին և հետ չըքավորին,  
Կըսկըծալով հիշեն թող ինձ փուչ աշխարհով անցավորին...

Ինձ հարկ չկա իմ գանձերից քո գանձերին մաս կըցելու,  
Բաց վորբանոց, անկելանոց, կամուրջ, ուղի տնւր գցելու.  
Մի խընայիր իմ ունեցածն ինձ հիշատակ դործածելու.  
Բացի քեզնից վոչ վոք չունեմ իմ կըբակին ջուր ածելու:

Իմ թագավոր, ավարտեցի յես իմ ձեռքով գրած կըտակ,  
Յեղ քեղ ահա պիտի թողնեմ սրտով հուզված, մըրըրկատակ.  
Մի վշտանար, իմ մնուցող, մի մշուշիր ճակատդ իստակ—  
Շատ թշնամու պիտի հսկես և խընամես շատ հըպատակ:

ԱՎԹԱՆԴԻԼԻ ՅԵՐԱՐՈՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՏԱՐԻԵԼԻՆ

Այս խոսքերով, լաց լինելով, գնում եր նա տիսուր, գունատ,  
Բարձրացալ մի լեռան գաղաթ, տեսավ մի դաշտ ստվերառատ.  
Շամբուտի մեջ տեսավ սեխն, կանգնած եր նա սանձն արձակած,  
Յեղ մտածեց. «Տարիելը այստեղ կլինի, չկա կասկած»:

Տեսնելուն պես սիրոց նրա արագ խփեց, դարձավ պայծառ,  
Վշտահարի խինդը գարձավ, վոչ թե տասը, դարձավ հաղար,  
Փայլ ստացավ վարդը կրկին, բյուրեղացավ գուլնը սաթի,  
Փոթորկի պես նա ցած վաղեց, չհամբերեց, վոր լավ դիտի:

Յերբ մոտեցավ Տարիելին, նա անսահման տիսրեց հանկարծ:  
Արլուներես եր Տարիելն ու մերձիման այնտեղ ընկած:  
Նրա ոձիքը պատառուած, մազերն ամբողջ փետած փուել.  
Չեր հասկանում ել վոչ մի բան, վոտքը կյանքից դենն եր դրել:

Իր մի կողքին մեռած առյուծ, և թուրն ընկած արյունոտած,  
Մյուս կողքին անշունչ մի վագր սատկած, գետնին եր տապալված.  
Նրա աչքից ալբյուրի պես արտասուքն եր առատ հոսում,  
Բայց հրդեհվում եր սիրտն ասես ու բորբոքվում նրա ներսում:

Սարսափահար աչքերը բաց, գիտակցություն չկար վրան,  
Տառապանքից արգեն հեռու, մոտեցել եր մահվան դռան:  
Ավթանդիլը բարձր կանչում, ձայն եր տալիս, վոր ուշքի գա,  
Նա չեր լսում, վազեց մոտիկ՝ յեղբայրությունը իր ցուց տա:

Չեռքով աչքից արցունք քամում և այտերն եր սրբում թեռվ,  
Նստել եր մոտ՝ ականջի մեջ նրա անունը կանչելով.  
Գոռում եր նա. «Չես ճանաչում, Ավթանդիլն եմ քեղ մոտ յեկած»,  
Բայց նա շմել ու չեր լսում, աչքերը մի կետի հառած:

Այսպես լեղավ բոլորն ահա ինչպես հիմա պատմեցի յես,  
Քամեց արցունքը աչքերի, փոքր ինչ նրան ուշքի բերեց.  
Նա ճանաչեց և համբուրեց, յեղբոր նման գրկեց նրան,  
Վկա յե տերը կենդանի՝ մարդ չի ծնվել նրանց նման:

Ասաց, «Յեղբայր, չթողեցի խոստում—յերդումն յես անկատար,  
Յերդումս յես հաստատեցի — հոգիս բերանս ինձ տեսար:  
Այժմ թող ինձ յես մինչև մահ, լամ, զլիսիս տամ արտասվալից,  
Բայց ինձ թաղիր, խնդրում եմ քեզ, դազանի կեր մի անի ինձ»:

Կարիճն ասաց, «Ի՞նչ ես խոսում, ինչու յես քեզ չարիք գործում,  
Ո՞վ չի յեղել սիրահարված, ո՞վ չի ալրվել սիրո բոցում.  
Ո՞վ ե մարդկանց ամրող ցեղից այդպիսի բան արել քեզ պես,  
Ի՞նչ ես տարվել սատանայով ու կամովին սպանում քեզ:

Թե գիտուն ես՝ գիտունները միաբերան այս են ասում —  
«Արին պիտի լինի արի, կարողանա լացը դսպել,  
Վշտերի դեմ ամուր մնա, լինի կարծը ժայռի նման.  
Մարդը վշտին տրվում ե լոկ գիտակցությամբ իր սեփական»:

Գիտուն ես դու, բայց գիտունի խոսքով վարվել դու չգիտես.  
Դաշտանների միջին, լացով, քո իզն ինչպես կկատարես.  
Ում համար վոր մահանում ես, դու չես գտնի կլանքն ատելով,  
Ի՞նչու յես վողջ գլուխդ կապում՝ վերքիդ նոր վերք հասցնելով:

Ո՞վ չի յեղել սիրահարված, ո՞վ չի ալրվել սիրո հնոցում.  
Ո՞վ չի կրել նեղություններ, ո՞վ ում համար ուշը չի կորցնում.  
Ի՞նչ պատահեց անբնական, ինչու յես դու հոգիդ մաշում,  
Զգիտես դու, վոր առանց փուշ և վոչ մի մարդ վարդ չի քաղում:

Վարդին հարցրին. «Այդքան չքնաղ կազմ ու դեմքով քեզ ո՞վ կերտեց.  
Ինչու յես դու փշոտ, ինչու ցավով են միշտ ձեռք բերում քեզ»:  
Ասաց. «Քաղցրին դառնով հասիր, լավն այն ե, ինչ գտնես դժվար,  
Միրունը թե եժան դարձավ, մի հատ չիրի արժեք մի տար»:

Յեթե վարդն ե այսակս ասում, բույսոն այդ անշունչ, փոքրահասակ,  
Ո՞վ կինձի ուրախություն առանց ցավի ու անվաստակ  
Ո՞վ ստացավ առանց փորձանք ինչ վոր լավ ե, դժվարահատ.  
Բախտից ինչու յես արտնջում, ի՞նչ արավ նա վոչ խելահատ:

Լսիր դու ինձ, գնանք ինձ հետ, հոժարակամ հեծիր քո ձին,  
Մի հետեւիր դու քո զլիսի խորհուրդներին ու մտքերին,  
Արա, ինչ դու չես ցանկանում, մի հետեւիր քո ցանկության,  
Լավ չլիներ, չելի ասի, յես չեմ սիրում կեղծավոր բան»:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ռուսթագելին և նրա «Վագրենավորը» Գ. Սեվակ 5  
Շոթա Ռուսթավելի (կենսադրական) էազմ. Պ. Պ. 12  
Շոթա Ռուսթավելու «Վագրենավորը» (պոեմի համառոտ բովանդակությունը) Մ. Պ. 16  
Հատվածներ Շոթա Ռուսթավելու պոեմից (Սարգսի, Վ. Տերյանի, Գ. Աստուրի 22  
թարգմանությամբ).

62

5

12


16

22



կազմեցին և խմբագրեցին՝ Գ. Ս և կ, Մ, Դ ու ը գ ա ը յ ա ն  
Տեղ. խմբագրեց Ան. Գ ա ս պ ա ը յ ա ն  
Սըմոզը Ա. Ա ր գ ա ը ա ն յ ա ն  
Կանտրու սըմոզը Ա. Շ ա հ ը ա զ յ ա ն

Հլավիտի լիազոր՝ Կ. 4721 Հրատ. 4416.  
Պատվեր 1364 Տիրաժ 5000.  
Թուղթ 24×110. ապ. 3 մամուլ.  
Մեկ մամ. 49280 նիշ. Հեղինակային 31/2 մամ.  
Հանձնված և արտադրության 29 գեկտ. 1937 թ.  
Սարացրված և ապելու 25 հունվարի, 1938 թ.  
Գինը 80 կ.



ԳԻՆԸ 80 ԿՈՊ.

ШОТА РУСТАВЕЛИ

и его

„Витязь в тигровой шкуре“  
Гиз Арм. ССР, Ереван, 1988 г.

ՀՀ Ազգային գրադարան



NL0389728

74.902

